



Վ. Ի. ԴՈՐԲՈՎՈՒՍԿԱՅԱ

Տ Պ Ա Գ Ի Ր

**ԳՈՐԾԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՏԱԼՈԳՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Ռուսերենից փոխադրեց Վ. ԿԱՐՄԵՆՅԱՆ

Պետական համալսարանի հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ—1949

24

Վ. Ի ԴՈՐՐՈՎՈՂՍԿԱՅԱ

Տ Պ Ա Գ Ի Ր
ԳՈՐԾԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՏԱԼՈԳՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուսանելից փոխադրեց Վ. ԿԱՐՄԵՆՅԱՆ

03 APR 2013

В. И. Добровольская
**ОПИСАНИЕ ПРОИЗВЕДЕНИЙ ПЕЧАТИ
ДЛЯ
БИБЛИОТЕЧНЫХ КАТАЛОГОВ**

(На армянском языке)
Ереван, 1949

ՏՊԱԳԻՐ ԳՈՐԾԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ

Գլուխ 1. ՏՊԱԳԻՐ ԳՈՐԾԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ:

«Նկարագրություն» տերմինի տակ պետք է հասկանալ «բիբլիոդրաֆիական տեղեկությունների համառոտ ամփոփումը տպագիր երկի մասին, որը հնարավորություն է տալիս կատալոգում գտնելու անհրաժեշտ հրատարակությունը, առանձնացնելու այն նույնատիպ հրատարակություններից և ստանալու նրա մասին բավականաչափ պատկերացում, որպեսզի կանգ առնել նրա ընտրության վրա»:¹ Այս բնորոշումը ոչ միայն բացահայտում է «նկարագրություն» հասկացությունը, այլ և ընդգծում է նկարագրության նպատակային սահմանումը՝ օգնել ընթերցողներին ընտրելու նրանց անհրաժեշտ դրքերը, ժուռնալները և այլն:

Մասնագիտական գրականության և գրագրաբանային պրակտիկայում գործադրվում են նաև այլ տերմիններ արտահայտելու համար «տպագիր երկերի նկարագրություն» հասկացությունը, օրինակ՝ դրքի նկարագրություն, կատալոգրաֆիա, կատալոգիզացիա, քարտագրություն, բիբլիոգրաֆիական նկարագրություն և այլն:

«Գրքի նկարագրություն» տերմինը կարող է գործածվել միայն դրքերի նկարագրության նկատմամբ: Մեծ քանակությամբ նյութեր են մնում, որոնց նկատմամբ այդ տերմինը ընդունելի չէ, օրինակ՝ պարբերական հրատարակությունների, հոգևածների, տեխնիկական գրականության հատուկ տեսակների (ստանդարտների, տեխնիկական կատալոգների, գյուտերի), աշխարհագրական քարտեզների, նոտաների և այլնի նկարագրությունը:

Բիբլիոգրաֆիական և գրագրաբանային գրականության մեջ

¹ Проект «Единых правил по описанию произведений печати для библиотечных каталогов», М. 1946. Рукопись.

երբեմն «կատալոգագրություն» (каталогграфия) տերմինն է գործադրվում, որպես հավասարազոր «տպագիր գործերի նկարագրությունը» տերմինի: Սակայն այդ տերմինը, որ փոխառված է ֆրանսիական գրականությունից, քիչ է տարածված ՍՍՌՄ գրադարանային պրակտիկայում:

Հայնորեն տարածված է «քարտագրում» տերմինը: Այն գրականության և պրակտիկայի մեջ գործ էածվում տարբեր նշանակություններով: «Քարտագրում» բառի տակ հաճախ ենթադրվում է գրադարանային ֆոնդերի արտացոլումը կատալոգներում: Այդ իմաստով, օրինակ, ասում են՝ «պարբերականները մեզ մոտ գրադարանում չեն քարտագրվում»: Այդ նշանակում է, որ գրադարանի կատալոգներում պարբերականները չեն արտացոլվում: Այսպիսով, «քարտագրում» տերմինը գործ էածվում կատալոգների ստեղծման հետ կապված բոլոր պրոցեսների միասնությունը նշելու համար: Այստեղ են մտնում սխտեմավորման, տուրկայավորման և գրական նյութերի նկարագրման, կատալոգներում քարտերի դասավորման աշխատանքները և այլն: Հաճախ «քարտագրում» բառը գործադրվում է և ամբլի նեղ իմաստով, որպես նույնական հասկացողություն «տպագիր գործերի նկարագրությունը» արտահայտություն:

Այժմ ընդունված է «տպագիր գործերի նկարագրությունը» արտահայտությունը: Այն ևս բոլորովին ձիշտ արտահայտություն չի հանդիսանում, որովհետև վերաբերում է միայն տպագիր գործերին, այն ժամանակ, երբ գրադարանավարին հարկ է լինում նկարագրել նաև մեքենագիր, ձեռագիր և այլ նյութեր:

Այդ իմաստի էությունը առավել ճշգրիտ կերպով արտահայտողը պետք է համարել «բիբլիոգրաֆիական նկարագրություն» արտահայտությունը, որը ընդունված է «գրադարանային կատալոգների համար տպագիր գործերի նկարագրության միասնական կանոնները» նախագծի մեջ:

Նկարագրությունը հանդիսանում է գրադարանային յուրաքանչյուր կատալոգի կառուցման սկզբնական և կարևորագույն հանգամանքը: Երկի ձիշտ նկարագրությունն ունի մեծ նշանակություն: Նախ և առաջ նրանից է կախված կատալոգների, հատկապես այբբենականի ներքին կառուցվածքը, թե ինչպես է նա կազմված: Ում համարել երկի հեղինակ, որ աշխատությունը

համարել «անսնուն», ինչ ծավալով և որքանով լրիվ տեղեկություններ տալ երկերի մասին,— այդպիսիք են այն սկզբունքային հարցերը, որոնցից կախված են կատալոգի կառուցվածքը և դեմքը: Բացի դրանից, կատալոգում ներդրված նկարագրությունն այն հիմնական աղբյուրն է, որից ընթերցողը սկզբնական տեղեկություն է քաղում տպագիր գործերի մասին: Այն բանից, թե ինչպես է կազմված նկարագրությունը, նրա լրիվ լինելուց, տրամաբանական կառուցվածքից և այլն, կախված է ընթերցողի հեշտ կողմնորոշումը կատալոգում:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՐԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Նկարագրությունը պետք է բավական լրիվ բացահայտի երկի բովանդակությունն ու բնույթը և ոչ թե սահմանափակվի նրա մասին արտաքին տվյալներով: Եթե գրքի վերնագիրը չի տալիս պարզ պատկերացում նրա բովանդակության մասին, նկարագրության մեջ հարկավոր է ճշտել վերնագիրը, լրացնելով այն անհրաժեշտ տեղեկություններով (ուղիղ փակագծերով): Բազմահատոր հրատարակությունների նկարագրության ժամանակ պետք է բացահայտել յուրաքանչյուր հատորի բովանդակությունը: Եթե ժողովածուի մեջ տպագրված են արժեքավոր հոդվածներ, հարկավոր է նրանց վերաբերյալ կազմել ուռնաձին նկարագրություններ: Այն դեպքերում, երբ գիրքն ունի որոշակի ընթերցողական կամ նպատակային նշանակվածություն, օրինակ, «դասագիրք գյուղատնտեսական տեխնիկոմների համար», այդ ևս պետք է արտահայտվի նկարագրության մեջ: Որոշ գրքերի համար պետք է նշել գրական ձևը (վեպ, ճառ, զեկուցում և այլն): Էական է հանդիսանում նաև երկի որոշ սերիայի պատկանելիության նշումը, օրինակ՝ «Ականավոր մարդկանց կյանքը», «Ստախանովականի գրադարան» և այլն: Այդ կարգի տեղեկությունները ընթերցողներին հնարավորություն են տալիս երկի մասին ստանալու առավել պարզորոշ պատկերացում:

Բոլոր գաղափարներում և բոլոր կատալոգներում նկարագրությունը պետք է լինի միակերպ: Գոյություն ունեն տպագիր գործերի հիմնական տեղեկությունների գրանցման միասնական կանոններ: Այդ կանոններին հետևելը բոլոր գրադարանների կող-

մից ապահովում է կատալոգների կառուցման միասնությունը և օգնում է ընթերցողին յուրաքանչյուր դրադարանի կատալոգներում արագ կողմնորոշվել: Նկարագրության կառուցման միակերպությունը հնարավորություն է ընձեռնում կատալոգներում գործադրել բիբլիոգրաֆիական և գրադարանային կազմակերպությունների կողմից «կենտրոնացված քարտագրման» կարգով հրատարակվող տպագիր քարտերը:

Չնայած, որ նկարագրության հիմնական կանոնները բոլոր գրադարանների համար միասնական են, նկարագրության լրրի-
վորքում տարբեր գրադարաններում կարող է տարբեր լինել: Այդ կախված է գրադարանի տիպից, նրա ֆոնդերի ծավալից և ընթերցողների կազմից: Միութենական կամ ռեսպուբլիկական նշանակություն ունեցող գրադարաններում, որոնք ստանում են ՍՍՌՄ տերիտորիայում լույս տեսնող մամուլի ողջ արտադրանքը (այսպես կոչված «լրիվ պարտադիր օրինակ»), նկարագրությունները կազմվում են հաստիկ մանրամասնությամբ: Այդպիսի գրադարանների կատալոգներում նշվում են ոչ միայն հեղինակի ազգանունը և անվան ու հայրանվան սկզբնատառերը, այլև լրիվ անունը և հայրանունը, իսկ երբեմն էլ նրա կյանքի տարեթիվերը կամ այլ տեղեկություններ նրա մասին, քանի որ առանց այդ տվյալների հնարավոր չէ տարբերել միանման ազգանուն ունեցող հեղինակների երկերը: Հաճախ դրբի հրատարակության տեղը աչախքն՝ նրա հրատարակչի գտնվելու վայրը նշելու հետ մեկտեղ հարկ է լինում նշել նաև նրա տպագրության վայրը. (այսինքն՝ տպարանի տեղը), ինչպես և մի շարք այլ բիբլիոգրաֆիական տեղեկություններ, քանի որ միայն շատ մանրամասն նկարագրությունն է հնարավորություն տալիս տարբերել տվյալ հրատարակությունը այդ նույն երկի ուրիշ շատ հրատարակություններից: Ավելի մութը գրադարանների՝ մարդային և շրջանային, ինչպես և բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական ինստիտուտների, գործարանային տեխնիկական և այլ գրադարանների համար նկարագրությունը կարող է նշանակալիորեն պարզացվել. օր.՝ հարկ չկա բացահայտել հեղինակների անունների և ազգանունների սկզբնատառերը, ավելորդ կերպով նշել դրբի շափր և այլն:

Միակերպության և լրիվության հետ մեկտեղ, տպագիր գործերի նկարագրությունը պետք է լինի ստույգ: Խոշոր գրադարանի

կատալոգի համար նկարագրության մեջ բաց թողնել կամ առաջ երևել տարր ոչ ճիշտ, — հաճախ նշանակում է զժվարեցնել կամ անհնարին դարձնել աշխատության որոնումը: Նկարագրության ստույգության պահանջը այնքան կարևոր է, որ ընդունված է բոլոր քարտերը մտցնել կատալոգի մեջ դրանք դրքի հետ երկրորդ անգամ համեմատելուց (այսպես կոչված «քարտերը խմբագրելուց») հետո միայն:

Նախառեղույցիոն Ռուսաստանում կատալոգներ կազմելու համար միասնական կանոններ կամ հրահանգներ գոյություն չեն ունեցել: Միասնական կանոններ կազմելու ուղղությամբ աշխատանքները ծավալվել են Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեղուցիայից հետո միայն: Մոսկվայում Ռուսկանցիի թանգարանի Հանրային գրադարանի՝ այժմ ՍՍՌՄ Վ. Ի. Լենինի անվան Պետական գրադարանի գրադարանագիտական ինստիտուտը, 1922 թ սկսել է սպազիր գործերի նկարագրության հրահանգի մշակումը սովետական գրադարանների կատալոգների համար:

1926—1934 թ. թ. հրատարակվել են «Հրահանգներ այբբենական կատալոգ կազմելու համար» նախագծի մի քանի պրակները, ուր տրվել են նկարագրման նոր կանոններ: Այդ «Հրահանգների» համարյա քսանամյա գործողությամբ ՍՍՌՄ գիտական և մասամբ մասսայական գրադարաններում ցույց է տվել, մի կողմից, նրա դրույթների կենսականությունը և ճշմարտությունը, մյուս կողմից — բացահայտել է կանոնների հետագա մի շարք կատարելագործումների անհրաժեշտությունը: Տպագիր գործերի նկարագրման սովետական կանոնների վերջնական վարիանտը (տարբերակը) նախապատրաստելու նպատակով, 1939 թ. Գրադարանագիտության և հանձնարարական բիբլիոգրաֆիայի դիտա-հետազոտական ինստիտուտին կից կազմակերպվել է հատուկ հանձնաժողով: 1940 թ., Գրադարանագիտության ինստիտուտի լիկվիդացումից հետո սկստական միասնական կանոնների մշակման գործը իր վրա է վերցրել Մոսկվայի Վ. Մ. Մուրտովի անվան Պետական գրադարանային ինստիտուտը: 1941 թ. ՌԱՅՍՌ Լուսավորումի հրամանով կազմակերպվել է միջգերատեսչական հանձնաժողով: Հետագայում աշխատանքները տարվել են ՍՍՌՄ Վ. Ի. Լենինի անվան գրադարանի հետ միասնել: Այժմ այդ հանձնաժողովի կողմից մշակված

«Տպագիր գործերի նկարագրության միասնական կանոնները գրադարանային կառավարողների համար» պատրաստվում է տպագրության:

Դիմում 2. ԳՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գրադարանի ֆոնդերը բազմազան են: Նրանց կազմի մեջ են մտնում տարբեր նյութեր՝ գրքեր, պարբերական հրատարակություններ (ժուռնալներ և թերթեր), թերթիկներ, աշխարհագրական քարտեզներ, դժագրքեր, պլակատներ, պորտրետներ, տեխնիկական դոկումենտացիայի տարբեր տեսակներ—պլուտերի նկարագրություններ, ստանդարտներ, նախագծեր, մեքենագիր ղեկուցումներ, հաշվետվություններ և թարգմանություններ, Հրատարակված դիսերտացիաներ, ձեռագրեր և այլն:

Բավական բազմազան է նաև գրադարանների գրքային ֆոնդերի կազմը: Գրքերը տարբերվում են ոչ միայն ըստ բովանդակության և ընթերցողական նպատակայնության, այլև իրենց կառուցվածքով և հրատարակման ձևով: Ամենից շատ գրադարանավարին հարկ է լինում գործ ունենալ գրքերի այնպիսի տարածված տեսակների հետ, ինչպիսիք են մենագրությունները, ժողովածուները, դասագրքերը, տեղեկատուները, բաղմահատոր և սերիական հրատարակությունները: Նրանց նկարագրությունը փոփոխակիում է, հայած թե գրքի որ տեսակն է նկարագրվում, ինչպիսին են նրա առանձնահատկությունները:

Մենագրությունն իրենից ներկայացնում է մի աշխատություն՝ նվիրված մի հարցի առավել կամ նվազ բազմակողմանի հետազոտությանը: Մեծամասամբ այդ մեկ կամ երկու հեղինակի աշխատություն է:

Ի տարբերություն մենագրության, ժողովածուները բովանդակում են մեկ կամ մի շարք հեղինակների մի քանի առանձին ինքնուրույն աշխատություններ՝ սովորաբար գրված իրար մոտ կամ նման թեմաների շուրջ: Եթե վերնագրից պարզ չէ, որ դիրքը հանդիսանում է ժողովածու, ապա վերնագրից հետո ուղիղ փակագծերում նշվում է՝ «Հոլովածուների ժողովածու», «Նյութերի ժողովածու» և այլն: Բայց երբեմն այդ բավական չէ և հարկ է լինում նշել ժողովածուում տպագրված հոլովածուների վերնագրերն ու նրանց հեղինակները:

Գրադարանային ֆոնդերում գգալի տեղ են գրավում ղանազան տեսակի ուսումնական նյութերը: Արդեն նկարագրության մեջ սոսկ նշումը՝ «Դասագիրք» կամ «Ուսումնական ձեռնարկ» ստիպում է ընթերցողին ենթադրել առարկայի սիստեմատիկ շարադրման առկայությունը, որը հանդիսանում է դասագրքի բնորոշ կողմերից մեկը: Ոչ պակաս կարևոր է և այն հանգամանքը, որ դասագրքերը և ուսուցման ձեռնարկները միշտ նախատեսվում են սովորողների որոշ կարգի համար (միջնակարգ և թերի միջնակարգ դպրոցների, ԲՌԶ երի, տեխնիկումի կուլսերի, որակավորման բարձրագման կուրսերի և այլնի համար): Օրինատացիան դեպի սովորողների որոշակի խումբը, դասագիրքը տարբերում է ձեռնարկից: Ձեռնարկները սովորաբար նախատեսվում են այս կամ այն որակի մասնագետների կողմից պրակտիկ աշխատանքներում օգտագործելու համար (ինժեներ-էլեկտրիկների, բրիգադիր-սերմագետների և այլն): Նկարագրության մեջ դպրոցի տիպի նշումը, որի համար նախատեսված է դասագիրքը, այնքան անհրաժեշտ է, ինչքան և մասնագետների որակի նշումը, որոնց համար նախատեսված է ձեռնարկը: Այդ իսկույն կողմնորոշում է ընթերցողին՝ գրքի բնույթի նկատմամբ:

Նույնը պետք է ասել նաև ֆրեստումատիայի նկարագրության մասին: Քրեստոմատիան իրենից ներկայացնում է մի գիրք, որը բովանդակում է նախկինում հրատարակված ոչ մեծ աշխատություններ կամ հատվածներ՝ մեկ կամ մի քանի հեղինակների գործերից: Նրանք հիշեցնում են ժողովածուների որոշ տեսակներ, սակայն, ի տարբերություն վերջիններից, դրանք ունեն ուսումնական նշանակություն: Քրեստոմատիաների նկարագրության ժամանակ անհրաժեշտ է ոչ միայն նշել հրատարակության բնույթը («Քրեստոմատիա»), այլև այն դեպքերում, երբ քրեստոմատիան նախատեսվում է որոշակի դպրոցների և դասարանների սովորողների համար, նշել դպրոցը և դասարանը, որոնց համար նա նախատեսված է:

Նույնը պետք է հաշվի առնել նաև ուսումնական ատլասների, աղյուսակների, ալբոմների և այլնի նկարագրության ժամանակ:

Գրադարանավարին հարկ է լինում լարված աշխատել տեղեկատու գրականության հետ: Տեղեկատու հրատարակությունները բովանդակում են համառոտ գիտական, տեխնիկական և այլ տե-

դեկուժյուններ: Տեղեկատուների թվին են պատկանում հանրագիտարանները, զանազան բառարանները (լեզվական, բացատրական, տերմինաբանական), ամեն տեսակի տեղեկատու դրքերը, ինչպես օրինակ, «Գիտական աշխատողի տեղեկատու», «Շաֆերի տեղեկատու», «Մետադագործի տեղեկատու» և այլն: Տեղեկատուները նկարագրելու ժամանակ անհրաժեշտ է նշել նրանց բնույթը և նպատակայնությունը, եթե այդ պարզ չէ վերնագրից:

Բնորոշ առանձնահատկություններով են տարբերվում սերիալային և բաղմահատոր հրատարակությունները:

Սերիալ իրենից ներկայացնում է իրար հետ լեմմատիկայի ընդհանրությամբ կապված մի բնդհանուր սերիալային վերնագրով, մի հրատարակչության կողմից հաջորդական պրակներով հրատարակվող, մեծամասամբ միակերպ ձևավորված ու շատ հաճախ հերթական համարներ ունեցող տպագիր երկերի խմբուրույն մի շարք: Սերիայի ընդհանուր անունը սովորաբար տպագրվում է դրքի վրա հեղինակի և վերնագրի նշումից վերև և հանդիսանում է որպես «պլանարի», որը միացնում է բոլոր պրակները: Բաղմաթիվ սերիաներ շատ պոպուլյար են, դրա համար հաճախ սերիայի առանձին պրակներ ընթերցողները հարցնում են սերիայի անունով: Այդպիսիք են, օրինակ, — «Ականավոր մարդկանց կյանքը», «Պատմական վեպեր» սերիաները, բաղմաթիվ «Գրադարան» սերիաներ, («Յուրա-չուրի գրադարան», «Գրադարան», «Գրադարան», «Գրադարան», «Գրադարան», «Գրադարան» և ուրիշ.): Այդ պատճառով սերիայի յուրաքանչյուր պրակը հարկ է լինում այբբենական կատալոգում արտացոլել երկու անգամ՝ սերիայի անվան տակ և հեղինակի կամ պրակի վերնագրի տակ:

Սերիայի տարատեսակներն են հանդիսանում բաղմադան «Աշխատություններ», «Նոթեր», «Տեղեկագրեր», «Նշվել» և այլն, որոնք լույս են ընծայվում ահագեմիաների, գիտահետազոտական ինստիտուտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և այլ հիմնարկների ու կազմակերպությունների կողմից: Դրանք այսպես կոչված շարունակվող հրատարակություններն են, որոնք իրենցից ներկայացնում են հիմնարկի, ընկերության կամ այլ կոլեկտիվի մենագիր աշխատությունների կամ այլ նյութերի ժողովածուներ, որոնք լույս են տեսնում հաջորդաբար համարակալված պրակներով՝ ընդհանուր անվան տակ, բայց առանց խիստ պար-

բերութեան և, որպէս կանոն, չեն տարածվում բաժանորդագրութեան միջոցով: Այդ հրատարակութիւնները հիշեցնում են և պարբերական հրատարակութիւնները և բազմահատոր աշխատութիւնները:

Յուրաքանչյուր գրողարանի աշխատանքներում բացառիկ մեծ նշանակութիւն ունեն պարբերական հրատարակութիւնները, — ժուռնալները, թերթերը, բյուլետենները և այլն: Շարունակվող հրատարակութիւնների նման, պարբերական հրատարակութիւնները նախատեսված են երկարատե շարունակութեան համար: Նրանց լույս ընծայող հրատարակչութիւնը չի որոշում հրատարակութեան վերջանալու ժամկետը և համարում է, որ նա պետք է լույս տեսնի միշտ, տարեց-տարի: Ինչպէս և շարունակվող հրատարակութիւնները, պարբերական հրատարակութիւնները լույս են տեսնում առանձին հաջորդական պրակներով («համարներով»), միասնական անվան տակ և միակերպ ձևավորությամբ: Բայց, ինչպէս երևում է անունից, պարբերական հրատարակութիւնները տարբերվում են որոշակի ժամանակամիջոցում լույս ընծայման կանոնավորվածությամբ (տարեկան, եռամսյա, ամսական, ամիսը երկու անգամ, տասօրյա, շաբաթական և այլն): Բացի դրանից, պարբերական հրատարակութիւնները համարյա միշտ բովանդակում են հասարակական-քաղաքական ընթացիկ դեպքերի, գիտական և գրական կյանքի արձագանքները՝ առաջնորդող և խմբագրական հոգւածների, խորհրդակցի, թղթակցութիւնների ձևով և այլն:

Ի տարբերութիւն սերիալի, պարբերական հրատարակութիւնները կատալոգում արտացոլվում են միմիայն ամբողջությամբ, յուրաքանչյուր համար առանձին չի նկարագրվում:

Բազմահատոր հրատարակութիւններ գրողարանային պրակտիկայում ընդունված է անվանել այն բոլոր ապագիր երկերը, որոնք լույս են տեսնում երկու կամ ավել հատորներով, պրակներով, մասերով և այլն: Եթե սերիալի յուրաքանչյուր հատոր իրենից ներկայացնում է ինքնուրույն ավարտված աշխատութիւն, ապա բազմահատոր հրատարակութեան յուրաքանչյուր մասը կամ պրակը հանդիսանում է միասնական ամբողջութեան միայն մեկ մասը: Այդպէս են, օրինակ, Մարքսի, «Կապիտալ»-ի 2-րդ հատորը, Տոլստոյի «Պատերազմ և խաղաղութիւն» վեպի 2-րդ հատորը, Մենդելեևի «Քիմիա»-ի 1-ին մասը: Բազմահատոր աշխատութեան

հատորների քանակը նախօրոք որոշում է հրատարակությունը, և վերջին հատորի լույս ընծայմամբ հրատարակությունն ավարտվում է: Դրանով բազմահատոր հրատարակությունը տարբերվում է սերիական և պարբերական հրատարակություններից, որոնք լույս են տեսնում հատորների անսահմանափակ քանակությամբ և շարունակվում են անորոշ թվով տարիներ: Բազմահատոր հրատարակությունների բոլոր հատորների մասին տեղեկությունները, որպես միասնական ընդհանրություն, պետք է հավաքված լինեն կատալոգում մեկտեղ, այդ պատճառով բազմահատոր հրատարակությունը ստանում է մեկ ամփոփված նկարագրություն:

Գրադարանավարին հարկ է լինում գործ ունենալ ոչ միայն տպագիր գործերի հրատարակչական ձևավորման հետ: Հաճախ են դեպքերը, երբ գրադարանի ֆոնդում հայտաբերվում են առանձին ինքնուրույն տպագիր գործեր՝ կազմված ուրիշ, դարձյալ ինքնուրույն, առաջինների հետ ոչ մի առնչություն չունեցող աշխատությունների հետ մեկտեղ: Գրքի տերը մի կազմի մեջ միացնում է տարբեր աշխատություններ, ղեկավարվելով զանազան նկատառումներով, օրինակ՝ սիրած գրքերը, մոտիկ մարդու նվերները, մեկ թեմայի շուրջ գրքերը և այլն: Այդպիսի գիրքը, որի մեջ մեխանիկորեն մեկ կազմի տակ միացված են մի քանի, մեկը մյուսից անկախ տպագիր գործեր, կոչվում է կոնվոլյուտ: Յուրաքանչյուր երկ, որը մտնում է կոնվոլյուտի մեջ, կոչվում Երկառ: Այդպիսի արհեստականորեն ստեղծված ժողովածուների նկարագրության ժամանակ չի կարելի սահմանափակվել միայն առաջին աշխատության նկարագրությամբ: Նկարագրության մեջ պետք է թվարկվեն բոլոր ալիգատները: Բացի դրանից, նրանցից յուրաքանչյուրի համար պետք է կազմել ինքնուրույն նկարագրություն, որպեսզի յուրաքանչյուր աշխատություն գրադարանի կատալոգներում ներկայացվի իր տեղում:

Կոնվոլյուտի հավապատկերն այն է, երբ որպես առանձին գրադարանային միավոր է հանդիսանում ուրիշ հրատարակության մի որեւէ ինքնուրույն մասի առատախալը, օրինակ, ժողովածուից կամ պարբերական հրատարակությունից առանձին հոսվածի արտատիպը: Արտատիպը տպագրվում է նույն շարվածքից, որից և տպագրվել է հրատարակությունն ամբողջությամբ (ժողովածուն կամ ժուռնալի ողջ համարը), և դրա համար, որպես կանոն, ժո-

ղովածույում կամ ժուռնալում տրված տեքստի նկատմամբ ոչ մի փոփոխություն չի պարունակում: Երբեմն արտատիպերը պարունակում են աննշան փոփոխություններ էջերի նոր համարակալման, տիտղոսաթերթի, շապիկի և այլնի ավելացման կարգով: Արտատիպի նկարագրման դեպքում անհրաժեշտ է նշել, որ հրատարակությունը հանդիսանում է առանձին արտատիպ այսինչ ժուռնալից, ժողովածուից և այլն:

Արտատիպը չպետք է շփոթել ժուռնալից կամ գրքից հասարակ կտրվածքի հետ, երբ գրադարանավարը կամ գրքի (ժուռնալի) տեղը ամբողջական հրատարակությունից մեխանիկորեն առանձնացնում է իրեն հարկավոր նյութը: Այսպես, օրինակ, մասնադիտական գրադարանում կարող են հավաքվել այս կամ այն մասնագիտության վերաբերյալ ընդհանուր լիբրթեում, ժուռնալներում կամ ժողովածուներում տպագրված հոդվածների կտրվածքներ: Այն փաստը, որ նկարագրվող նյութը իրենից ներկայացնում է կտրվածք որևէ հրատարակությունից, պետք է նշվի նկարագրության մեջ:

Նկարագրելով գիրքը, պետք է նրա հետ խնամքով ծանոթանալ: Անհրաժեշտ է պարզորոշ պատկերացնել գրքի կառուցվածքը և որոշել, թե չկա՞ն արդյոք նրա մեջ արժեքավոր նյութեր, որոնք չեն արտացոլվել նրա վերնագրում: Գրքի հետևյալ տարրերը կարող են այս կամ այն տվյալները տալ նրա նկարագրման համար: Հաճախ գրքի հիմնական տեքստից առաջ տեղավորվում է նախաբան, առաջաբան, ներածական հաղված և այլ նյութ, որը պարունակում է գրքի հիմնական տեքստի նկատմամբ լրացումներ՝ նրա բնութագիրը, նշումներ նրա նպատակի մասին, նրա կազմելու մեթոդները, գիրքը կազմելու մեջ մասնակցություն ունեցող մարդկանց և կազմակերպությունների անունները և այլ տեղեկություններ: Երբեմն նախաբանի կամ ներածականի միջոցով կարելի է որոշել, թե չի՞ հանդիսանում արդյոք գիրքը պաշտոնական կամ գերատեսչական հրատարակություն, արդյոք նա մենագիր աշխատություն է, թե՞ տարբեր հեղինակների հոդվածների ժողովածու, որոշել գիրքը կազմողների անունները, ճշակ հեղինակների անունները և հայրանունները, պարզել աշխատության նախորդ հրատարակությունների վերնագիրը և այլն: Նույնպիսի տեղեկություններ

կարելի է գտնել վերջաբանի կամ եզրավավան մեջ, որոնք գետեղվում են գրքի հիմնական տեքստից հետո:

Քիտական զեկուցումները, հոգվածները և այլ գիտահետազոտական նյութերը հաճախ ավարտվում են ամփոփումով, որը հանգիստանում է հեղինակի հիմնական մտքերի և եզրակացությունների սեղմ շարադրումը: Ամփոփումը նրբեմն տրվում է մի այլ լեզվով, քան գրքի հիմնական տեքստը: Նա ևս կարող է օգտագործվել նկարագրության ժամանակ՝ ճշտելու նկարագրվող աշխատության բովանդակությունը և բնույթը:

Հաճախ գիրքը օժտում են ծանոթագրություններով և կոմենտարիաներով, որոնք բացատրում են առանձին տերմիններ, արտահայտություններ, և տեքստամիջի բառեր: Ծանոթագրությունները և կոմենտարիաները տեղավորվում են կամ գրքի վերջում, կամ տեքստին զուգընթաց (տողատակի ծանոթագրություններ): Տողատակի ծանոթագրություններն իրենցից առանձին արժեք են ներկայացնում, երբ նրանց մեջ տրվում են բիբլիոգրաֆիական տեղեկություններ, — աղբյուրների անուններ (գրքեր, ժուռնալային հոդվածներ և այլն) տեքստում մեջբերված ցիտատներ, թվեր և այլն: Ոչ պակաս կարեւոր է գրքի վերջում, առանձին գլուխներից հետո կամ տողատակին տեղավորված միջգրքային բիբլիոգրաֆիայի առկայությունը, քանի որ բիբլիոգրաֆիան, ցույց տալով ընթերցողին տվյալ հարցի մասին գրականությունը, լայնացնում է գրքի շրջանակները: Միջգրքային բիբլիոգրաֆիայի առկայությունը պետք է նշվի նկարագրության մեջ:

Էական մաս են հանգիստանում գրքի վերջում տեղավորված զանազան օժանդակ ցանկերը: Ցանկերը տարբեր են ըստ իրենց բովանդակության (սնվանական, տեխնիկական տերմինների, աշխարհագրական անունների, պատմական դատանների ցանկեր և այլն) և ըստ իրենց կառուցվածքի (այբբենական, առարկայական, խրոնոլոգիական և այլն): Նրանք օժանդակում են ընթերցողներին օգտվել գրքից և մեծ օգնություն են ցույց տալիս գրադարանավարին տեղեկատու աշխատանքներում:

Գրքում եղած բոլոր նյութերը (առանձին գլուխներ, բաժիններ, նախաբան հոդվածներ, բիբլիոգրաֆիական ցանկեր և այլն) թվարկվում են գրքի վերջում կամ սկզբում ձեռնեղած բովանդակությամբ մեջ: Բովանդակությունը դա գրքի բոլոր առանձին նյութե-

րի համառոտ թվարկումն է, որը հնարավորութուն է տալիս արագ, թեկուզ ընդհանուր գծերով, ծանոթանալ գրքի բովանդակության և կառուցվածքի հետ: Բովանդակությունը հանդիսանում է գրքի անբաժանելի մասը և պետք է էջերի քանակի հետ հաշվի առնվի նկարագրության ժամանակ:

Գրքերը հրատարակվում են շապիկով կամ կազմով: Շապիկ կոչվում է սպիտակ կամ դունավոր թղթից գրքի կոնակին փակցված ալն ծածկը, որը սովորաբար ավելի հաստ է, քան ալն թուղթը, որի վրա տպագրված է հիմնական տեքստը: Երբեմն հրատարակչությունը գիրքը լույս է ընծայում կազմով: Այդ կոչվում է հրատարակչական կազմ, ի տարբերություն ալն կազմի, որը պատրաստվում է գրադարանավարի պատվերով կազմարարի կողմից: Հաճախ հրատարակչական կազմի կամ շապիկի վրա լինում է այսպես կոչված սուպեր-շապիկ—թղթային փաթեթ, որը մնում է կազմի վրա այսպես կոչված կափույրի, թղթի ծավալածքների շնորհիվ: Երբեմն սուպեր-շապիկը փակցված է լինում կազմին կամ շապիկին: Գրքի այդ տարրերը՝ հրատարակչական կազմը, շապիկը և սուպեր-շապիկը սովորաբար պարունակում են որոշ տեղեկություններ գրքի մասին՝ նշում նրա հեղինակի, աշխատության վերնագրի մասին և այլն: Սակայն շապիկների և սուպեր-շապիկների մեծ մասը զբաղված է լինում իլուստրացիաներով և այդ պատճառով գրքի մասին տեղեկությունները նրանց վրա տրվում են ոչ այնպես լրիվ, ինչպես որ տիտղոսաթերթի վրա: Գրքի նկարագրման ժամանակ հարկ չի լինում հենվել այդ տեղեկությունների վրա, բայց հաշվի առնել նրանց անհրաժեշտ է, քանի որ նրանք հիշվում են ընթերցողների կողմից, որոնք հաճախ նրանցով են ղեկավարվում կատալոգում գրքերը փնտրելիս: Դրա համար, բացի աշխատության հիմնական վերնագրից, անհրաժեշտ է կատալոգում արտացոլել շապիկի կամ կազմի վրա տպագրված վերնագիրը:

Շապիկից հետո գրքում տեղավորվում է տիտղոսաթերքը: Տիտղոսաթերք է կոչվում գրքի առաջին էջը, որը պարունակում է հիմնական, առավել էական տեղեկություններ նրա մասին՝ նշումներ հեղինակի և վերնագրի մասին, տեղեկություններ այն անձանց մասին, որոնք մասնակցություն են ունեցել գրքի ստեղծման գործում (կազմողներ, խմբագիրներ, թարգմանիչներ, նկարազարդողներ և այլն), երկի բնույթի և գրական ձևի մասին, նշում, թե որ

հրատարակությամբ է լույս տեսնում գիրքը. նախորդ հրատարակությունների հետ համեմատած, պարունակում է արդյոք նա փոփոխություններ, նշում այն սերիայի մասին, որի պրակն է հանդիսանում գիրքը, այն կազմակերպության անունը, որը նպաստել է գրքի ստեղծմանը կամ հավանություն է տվել նրան, տեղեկություններ հրատարակության տեղի և տարեթվի, ինչպես և գիրքը լույս ընծայող հրատարակչության մասին: Քանի որ տիպոգրաֆերթը պարունակում է գիրքը բնութագրող էական տեղեկություններ, դրա համար էլ այն ընդունում են որպես նկարագրության հիմք:

Օրինակ Ա: 1

Գրքի տիպոգրաֆերթը

Պոլեսաբնե քոյո Լեկոնեթի միայն 4004(բ) 44-16 418 ՄԱՐԲՈՒ-ԼՆԵԼԱՆ-ԼԵՆԻՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ	← Նախավերնագիր
4. ՄԱՐԲՈՒ	← Հեղինակ
ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՅԱՆ ԱՂԲԱՏՈՒԹՅՈՒՆԸ	← Վերնագիր
ՊԱՏԱՍԵԱՆ Պ. ՊԻՌԻՆԻՆ «ԱՂԲԱՏՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՅԱՆԸ»	← Ենթավերնագիր
ԵՐԵՎԱՆ 1918	← Հրատարակչական տվյալներ

Երբեմն գրքում լինում են մի քանի տխուր սաթերներ: Զննելով դրանք, գրադարանավարը հեշտությամբ կտարբերի հիմնական տխուր սաթերից, այսինքն այն, որը պետք է հիմք ընդունվի նկարագրության համար:

Երբեմն հանդիպում է զուգահեռ տխուր սաթեր, որը վերարտադրում է հիմնականը, բայց ուրիշ լեզվով (տե՛ս օրինակ № 2):

Հանդիպում են նաև լրացուցիչ տխուր սաթերներ, որոնք պարունակում են որևէ ձեռագիր տվյալներ: Այսպես, օրինակ, Թարգմանական երկերում որպես լրացուցիչ տխուր սաթերի հաճախ վերարտադրվում է օրիգինալի տխուր սաթերից, վերահրատարակության ժամանակ—ավելի առաջ հրատարակվածի տխուր սաթերից և այլն:

Օրինակ № 2

Զուգահեռ և հիմնական տխուր սաթեր

ՀԱՅԿ(Ի)Պ ԿՆԻԿ ԿՈՒ ՄԱՐԿԻՆ ԻՍԿԱՆԻՍԻՆԻՆ
ԽՈՍԻՏՈՒՄԻ ՀԱՅԿԱՆԱՆ ԱՊՐԵՍԻ

В. И. ЛЕНИН

Վ. Ի. Լ. ԵՆԻՆ

В. И. ЛЕНИН

ԵՐԿԵՐ

СОЧИНЕНИЯ

Թարգմանված է
Հարրոլդ Նրատարակությունից

Издание четвертое

ՀԱՅԿԱՆԱՆ
ԵՐԵՎԱՆ • 1949

АРМГБЗ
ЕРЕВАН
1949

Երբեմն հրատարակության կողմից գրքերը լույս են ընծայվում ծավալված տխուր սաթերով: Նրա տարրերը սեղավորված են

բացված գրքի երկու էջերում, երեսի կողմից մեկը մյուսի դիմաց, այնպիսի կարգով, որ երկու էջերը կազմում են որպես մեկ միասնական էջ, որի վրա ձախից աջ տեղավորված են վերնագիրը, ենթավերնագրային տեղեկությունները, հրատարակչական տվյալները և տիտղոսաթերթի այլ տարրերը (տե՛ս օրինակ № 3):

Բազմահատոր հրատարակություններում, օրինակ, երկերի ժողովածուներում, երբեմն լինում են երկու տիտղոսաթերթ տարբեր բովանդակությամբ: Մեկ տիտղոսաթերթը պարունակում է ամբողջ բազմահատոր հրատարակության համար ընդհանուր տեղեկություններ (միասնական վերնագիր, ընդհանուր բոլոր հատորների համար, ամբողջ բազմահատորի խմբագրի անունը և այլն): Այդ, այսպես կոչված ընդհանուր կամ գլխավոր տիտղոսաթերթն է: Մյուսը—պարունակում է տեղեկություններ միայն մեկ հատորին վերաբերող,—այդպիսի տիտղոսաթերթը ընդունված է կոչել մասնակի տիտղոսաթերթ: Երկու տիտղոսաթերթերն էլ մեծ մասամբ

Օրինակ № 3

Մավալուն տիտղոսաթերթ



ПРОИЗВЕДЕНИЕ
СЕМИ КОЛХОЗОВ

МОСКОВСКИЕ РАБОТЫ МОСКВА 1934

պարունակում են ինչպես բազմահատոր հրատարակությունն ամբողջությամբ առած, այնպես էլ յուրաքանչյուր հատորը առանձին բնութագրող բավականին լրիվ տեղեկություններ: Երբեմն ընդհանուր և մասնակի տիտղոսաթերթերը հաջորդում են մեկը մյուսին,

բայց ավելի հաճախ տեղավորվում են երեսի կողմով մեկը մյուսի դիմաց, ըստ որում, սովորաբար, ընդհանուր կամ գլխավոր տիտղոսաթերթը բացված գրքի ձախ կողմում, իսկ մասնակին՝ աջ (տե՛ս օրինակ № 4):

Տիտղոսաթերթից իր հակիրճությամբ տարբերվում է այսպես կոչված շմուց-տիտղոսաթերթը: Շմուց-տիտղոսաթերթ է կոչվում այն էջը, որը պարունակում է միայն գրքի համառոտ վերնագիրը կամ նրա մի մասի անունը, երբեմն հեղինակի ազգանունը: Շմուց-տիտղոսաթերթը տեղավորվում է տիտղոսաթերթից անմիջապես առաջ կամ նրանից հետո: Որոշ դեպքերում նա ներառվում է գրքի մեջ՝ բաժնի (գլխի) սկզբից առաջ և պարունակում է մասի, բաժնի և այլնի վերնագիրը: Իր հակիրճությամբ, ու իր վրա տեղավորված տեղեկություններով, շմուց-տիտղոսաթերթը տարբերվում է բազմահատոր հրատարակության մասնակի տիտղոսաթերթից:

Տպագիր գործի նկարագրության ժամանակ հարկ է լինում օգտագործել ոչ միայն գրքի այնպիսի տարրերը, ինչպես տիտղոսաթերթը, բովանդակությունը, ներածական հոդվածը և այլն: Երբեմն պետք է դիմել հրատարակչական անոտացիային, որը տալիս է գրքի սեղմ շարագրումը և նշում է նրա նպատակայնությունը: Հրատարակչական անոտացիան սովորաբար տեղավորվում է տիտղոսաթերթի երկրորդ էջում: Նկարագրության ժամանակ այն օգտագործում են գրքի բովանդակությունը և բնույթը ճշտելու, ընթերցողային նպատակայնությունը որոշելու և այլն: Սակայն հրատարակչական անոտացիայի օգտագործմանը պետք է մոտենալ քրննադատորեն, որովհետև նրա մեջ պարունակվող տեղեկությունները, և հատկապես գրքի գնահատականը, միշտ չէ, որ լինում են օբեկտիվ:

Նկարագրության ժամանակ մեծ օգնություն են ցույց տալիս նաև այսպես կոչված քոդաբեկման տեղեկությունները, այսինքն տիտղոսաթերթի հակառակ էջում կամ գրքի վերջին էջում տեղավորված նրա տպագրության հանձնելու և տպագրության ստորագրելու տվյալները, թույլտվության համարը և տարեթիվը, տպարանի անունը՝ որտեղ գիրքը տպագրվել է, հեղինակային և տպագրական մամուլների քանակն ու հրատարակչության լույս ընծայման հետ կապված այլ տեղեկություններ: Այսպես, օրինակ, տպագրության թույլտվության տարեթիվը կարող է հիմք տալ որո-

Ընդհանուր և մասնակի տիտղոսաբերքեր

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՊՈՍՏՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԻՍՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

Վ.Ի.ԼԵՆԻՆ

Վ.Ի.ԼԵՆԻՆ

ԵՐԿԵՐ

ՀԱՏՈՐ

6

Հունվար 1902—օգոստոս 1903

Նախաձեռնված է
Հոգևորականության նախագահի կողմից

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
• 1949

Հելու գրքի հրատարակման տարին այն դեպքում, երբ նա չի նշված տիտղոսաբերքի կամ շապիկի վրա: Տպարանի հասցեն օգնում է որոշելու գրքի հրատարակման վայրը, եթե այն նշված չէ գրքի վրա:

Երբեմն գրքի տիտղոսաբերքի և շապիկի չունեցող արատավոր օրինակ նկարագրելու ժամանակ, գրադարանավարը ղեկավարանում է որոշել գրքի հեղինակը և նրա վերնագիրը: Այդ դեպքում նրան կարող են օգնել որոշ էջերի ներքևի մասում փոքր տառերով տպագրված տպարանային նշումները՝ այսպես կոչված նոտան—յուրաքանչյուր տպագրական մամուլի առաջին էջի վրա փոքր տառերով տպագրված գրքի հեղինակի և վերնագրի նշումը: (Սովորական չափի գրքերում տպագրական մամուլը պարունակում է 16 էջ և այդպիսով տպագրական մամուլի առաջին էջերը կլինեն 17, 33, 49, 65 և այլն): Յուրաքանչյուր տպագրական մամուլի երրորդ էջում (այսինքն 19, 35, 51, 67 և այլն էջերի վրա), իսկ երբեմն էլ

տպարանային նորմայի հետ մեկտեղ դրվում է տպարանային սիգնատուրան—տպագրական մամուլի հերթական համարը աստ-
ղակիթ թվի միջոցով:

Երբեմն էջի վերը, բայց ավելի հաճախ գլխի կամ բաժնի սկզբում տպագրվում է գրքի վերնագիրը: Յուրաքանչյուր էջի կամ էջի կեսի վրա կրկնվող այդ վերնագիրը կոչվում է կոլոն-տիտղոս, իսկ էջի ներքևը կամ վերը գրված հերթական համարը—կոլոն-թիվ:

Էջերի համարակալումը ամբողջությամբ կոչվում է պագի-նացիա (էջագրություն): Պագինացիան բաժանված է կոչվում այն դեպքում, երբ գրքի էջերի համարակալումը համատարած (շարու-նակական) չի, օրինակ, առանձին համարակալված է ներածական հոդվածը, ապա սկսվում է հիմնական տեքստի համարակալումը:

Շատ գրքերում հանդիպում են չհամարակալված կամ ողջ գրքից առանձին համարակալության մեջ թերթեր, տպագրված ավելի հաստ թղթի վրա, որոնք գլխավորապես պարունակում են դիագրամաներ, պորտրետներ և այլն: Տեքստից դուրս, այսինքն չհամարակալված կամ ինքնավար համարներ ունեցող ներդիր թերթերի վրա տեղավորված, իլյուստրացիաները նկարագրության մեջ նշվում են առանձին:

Գլուխ 3: ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿՋԵՌՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԻԿԱՆ: ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՐԵՐԸ

Յուրաքանչյուր նկարագրություն պետք է կազմված լինի ընդ-հանուր սկզբունքների և միասնական մեթոդիկայի հիման վրա: Այդ սկզբունքները հետևյալներն են՝

1. Նկարագրությունը «ըստ բնականի», այսինքն՝ անմիջա-կանորեն ըստ իրեն՝ գրքի: Գրադարանային կառավողի համար չի կարելի գրքի նկարագրությունը կազմել հիշողությամբ, նախօրոք կազմած գրանցումներով կամ որևիցե բիրելոգրաֆիական ցանցով, գրախոսականով և այլն:

2. Գրքի նկարագրումն ամբողջապես, այլ ոչ թե միայն ըստ տիտղոսաթերթի: Հաճախ ընկնելով արագ մշակման հետևից, գոր-ծագրվում է նկարագրության ոչ ճիշտ ձև—տիտղոսաթերթի կամ շապիկի մեխանիկորեն պատճենավորումը: Նկարագրության այդ-պիսի ձևական մոտեցման դեմ պետք է վճռականորեն պայքարել,

քանի որ նա կարող է հանգեցնել կոպիտ սխալների: Շատ հաճախ տիտղոսաթերթը և շապիկը չեն պարունակում անհրաժեշտ բոլոր տվյալները. ընթերցողի կողմից տպագիր երկի մասին պարզորոշ պատկերացում ստանալու համար: Նկարագրության ժամանակ անհրաժեշտ է օգտագործել գրքի բոլոր տարրերը: Միայն տիտղոսաթերթի, բովանդակության, առաջաբանի, հրատարակչական անտացիայի և գրքի մյուս տարրերի հետ ծանոթանալուց հետո կարելի է ճիշտ որոշել գրքի հեղինակը և վերնագիրը, ճշտել նրա բովանդակությունը, գրական ձևը, ընթերցողական նպատակայնությունը, վերահրատարակման բնույթը, ստանալ տեղեկություններ հրատարակչության և գիրքը բնութագրող այլ տվյալների մասին:

3. Տիտղոսաթերթը, որպես նկարագրության հիմք: Սովորաբար գրքի մասին ամենալրիվ տեղեկությունները պարունակում է տիտղոսաթերթը: Այդ պատճառով այն են ընդունում նկարագրության հիմք: Միայն գրքի տիտղոսաթերթի բացակայության դեպքում նկարագրությունը կատարվում է շապիկից, իսկ եթե բացակայում է նաև շապիկը—տեքստի 1-ին էջի վերնագրից:

Սակայն տիտղոսաթերթին պետք է մոտենալ քննադատորեն՝ 1) նա միշտ չէ որ պարունակում է անհրաժեշտ բոլոր տեղեկությունները գրքի մասին, 2) հաճախ նա ծանրաբեռնված է լինում այնպիսի տվյալներով, որոնց կարելի է չարտացոլել նկարագրության մեջ: Երբեմն տիտղոսաթերթերը լինում են սխալներով և տառասխալներով: Դրա համար տիտղոսաթերթի տվյալները հարկ է լինում երբեմն լրացնել, կրճատել կամ շտկել:

Տիտղոսաթերթի տվյալները պետք է լրացնել նախ և առաջ գրքի մյուս տարրերից վերցրած տեղեկություններով: Իսկ եթե պահանջվող տեղեկությունները բացակայում են գրքում, այսինքն, երբ նրանց չի կարելի հայտնաբերել տիտղոսաթերթի, շապիկի վրա, ներածական հոդվածում և այլն,—նրանք փոխ են առնվում այլ աղբյուրներից՝ բառարաններից, հանրագիտարաններից, բիբլիոգրաֆիական ցանկերից և այլ տեղեկատուներից: Այսպես, օրինակ, որպեսզի ճշտել կամ բացել հեղինակների անունների և հայրանունների սկզբնատառերը, կամ որոշել երկի նախկին հրատարակչության անունը և այլն, հարկ է լինում դիմել հանրագիտարանների, կենսագրական-բիբլիոգրաֆիական բառարանների, հոբելյանական հրատարակությունների և այլ նյութերի: Այս կամ

այն կազմակերպությունների անունները ձշտելու համար, որոնք իրենց պաշտոնական հրատարակությունների հեղինակներն են հանդիսանում («կոլեկտիվ հեղինակ»), հարկ է լինում օգտագործել «Ամբողջ Մոսկվան» տիպի հասցեագրքերը և այլն: Այդ ձեռնարկները օգնում են որոշելու կազմակերպության պաշտոնական անունը, վերծանել նրա կրճատ անունը և այլն:

Ոչ տիտղոսաթերթից վերցրած բոլոր տվյալները, տիտղոսաթերթից վերցրած տվյալներից տարբերելու համար, առնվում են ուղիղ փակագծերի մեջ:

Տիտղոսաթերթի տեղեկությունները կրճատել (բաց թողնել) կարելի է միայն մեծ զգուշությամբ: Նկարագրության մեջ չեն մտցվում լուսնագները, աիրաժը, հրատարակության կառուցվածքի նշումը, դրքի գինը և այլն: Նրբեմն տիտղոսաթերթի վրա տրվում է երկար վերնագիր մեծ քանակությամբ միակերպ կրկնվող տեղեկություններով: Նման դեպքում կրկնվող տեղեկությունները կարելի է բաց թողնել, իսկ տեքստի գույս նետած մասի տեղը դնել բազմակետ:

Տիտղոսաթերթի վրա հանդիպած սխալները և տառասխալները, նկարագրության ժամանակ պետք է ուղղել այն դեպքերում, երբ նրանք աննշան են և չեն փոխում տեքստի իմաստը (օրինակ, շրջված տառ, մի տառի փոխադրումը մյուսի տեղը, տառասխալներ և այլն): Այդ կարգի սխալները չեն փոխադրվում նկարագրության մեջ և տառասխալներ պարունակող բառը տրվում է ճշտված ձևով: Բառերի մեջ բաց թողնված տառերը գրվում են ուղիղ փակագծերում: Սխալները և տառասխալները, որոնք փոխում են տեքստի իմաստը, նկարագրության մեջ բերվում են այն ձևով, ինչպես որ նրանք տրված են դրքում: Սակայն, որպեսզի ընթերցողի ուշադրությունը հրավիրվի գրքում եղած սխալի վրա, սխալ բառից, թվից կամ նշանից հետո, ուղիղ փակագծերի մեջ գրվում է բացազանչական նշան և տրվում է սխալի ուղղումը, օրինակ՝ «Գրքերի կվալիֆիկացիայի [կվալիֆիկացիայի] համառոտ աղյուսակներ գյուղական գրադարանների համար»:

Եթե գիրքը ունի երկու և ավելի տիտղոսաթերթ, նկարագրության հիմքում ընդունվում է՝

ա) հրատարակության տարբեր տարիներ ունեցող երկու տիտ-

դոսաթերթի դեպքում, ավելի ուշ տարեթիվ ունեցող տիտղոսաթերթը.

բ) տարբեր լեզուներով տիտղոսաթերթերի առկայության դեպքում—գրքի տեքստի լեզվով տիտղոսաթերթը, խառը տեքստի դեպքում—գրքի տեքստում գերակշռող լեզվի տիտղոսաթերթը. զուգահեռ տեքստի առկայության դեպքում, երբ հնարավոր չի որոշել, որ տեքստն է գերակշռում,—տվյալ երկրի պետական լեզվի (որով հրատարակված է գիրքը) տիտղոսաթերթը (ՍՍՌՄ ժողովուրդների լեզուներով հրատարակության համար—ռուսերեն լեզվով կամ այն ռեսպուբլիկայի լեզվով, որտեղ հրատարակված է գիրքը): Իսկ եթե բացակայում է պետական լեզվով տիտղոսաթերթը, ապա գիրքը նկարագրում են այն տիտղոսաթերթով, որը տեղավորված է գրքի սկզբում.

գ) տպարանային և ապսկետիսի, կամ լիտոգրաֆիական տիտղոսաթերթերի առկայության դեպքում տպագիր տիտղոսաթերթը.

դ) երեսի կոպիով իրար ուղղված երկու միակերպ տիտղոսաթերթերից,—մեծ մասամբ երկրորդը, այսինքն բացված գրքի աջ էջում տպագրվածը.

ե) երկու տիտղոսաթերթերից, որոնցից մեկը վերաբերում է ամբողջ բազմահատոր հրատարակությանը կամ ամբողջ սերիային (ընդհանուր կամ գլխավոր տիտղոսաթերթ), իսկ մյուսը—հատորի, մասի կամ պրակի՝ մասնակի տիտղոսաթերթ—այն տիտղոսաթերթը, ըստ որի նկարագրությունը ճանաչվում է տվյալ հրատարակության համար առավել նպատակահարմար: Բազմահատոր երկերը համարյա միշտ նկարագրվում են ընդհանուր տիտղոսաթերթով, իսկ սերիական հրատարակության պրակները—մասնակի տիտղոսաթերթերով:

Տպագիր երկերի նկարագրման ընթացքում առաջ են գալիս ուրիշ մեթոդական հարցեր, որոնք նույնպես պետք է լուծվեն՝ կատալոգի համար ամբողջությամբ առած միաձև: Այսպես, օբիեկտի, գրադարաններում կան գրքեր տարբեր լեզուներով, հին և նոր գրքեր, տպագրված ոչ միայն հին ուղղագրությամբ, այլև հին տառերով (գոթական տառերով գերմանական հրատարակություններում, հին սլավոնական—ռուսական հրատարակություններում, հին-սրբառական տառեր թաթարական, թուրքական, ուզբեկական

և ՍՍՌՄ այլ ժողովուրդների լեզուներով հրատարակություններում):

Անխուսափելիորեն ծագում է նաև աշնայիսի հարց, ինչպիսին նկարագրության մեջ մեծատառերի, հոռմեական և արաբական թվերի, կետադրական նշանների օգտագործման հարցն է: Ուշագրավյամբ զննելով տիտղոսաթերթերի, շապիկների և հրատարակչական կազմերի ձևավորումը, կարելի է հայտնաբերել կետադրական նշանների, մեծատառերի և փոքրատառերի բացակայությունը, որոնք չեն համապատասխանում քերականական պահանջներին և այլն: Նկարագրության մեջ այդ բոլոր առանձնահատկությունները մեխանիկորեն չեն փոխադրվում: Անհրաժեշտ է որոշել մեծատառերի, կետադրության նշանների և այլնի պործագրման միասնական կանոնները:

Ապա հարց է ծագում նկարագրության մեջ խոսքերի կրճատման միակերպության անհրաժեշտության մասին: Ինչքան էլ որ կարճ լինի նկարագրությունը, համենայն դեպս նա պետք է պարունակի բավականաչափ տեղեկություններ, որպեսզի ընթերցողներին հնարավորություն տա կատալոգում գտնել անհրաժեշտերը, ստանալ նրա մասին բավականաչափ պատկերացում, և կատարել ընտրություն: Կատալոգից օգտվելը հեշտանում է, երբ կատալոգի մեջ մտցրած նկարագրության խոսքերի կրճատումը միակերպ է: Այդ միակերպությունը ձեռք է բերվում նրանով, որ խոսքերը կրճատվում են որոշ կանոններով, կրճատումների հատուկ ցուցակով:

Նկարագրության լեզուն և ուղղագրությունը: Նկարագրությունը կազմվում է այն լեզվով, որով տպագրված է գրքի տեքստը: Այդպիսով գրադարանային կատալոգներում մի տեղ են հավաքվում հայերեն, ռուսերեն, ինչպես նաև ՍՍՌՄ մյուս ժողովուրդների ու օտար լեզուներով նկարագրությունները:

Եթե գրքերը նկարագրվում են քիչ ծանոթ լեզուներով, օրինակ՝ չեխերեն, քարտի վերին աջ անկյունում նշվում է գրքի լեզուն: Ծանոթության մեջ պետք է տալ վերնագրի թարգմանությունը հայերեն լեզվով:

Հայերեն, ռուսերեն և ՍՍՌՄ մյուս ժողովուրդների լեզուներով գրքերի նկարագրությունը պետք է տալ նոր ուղղագրությամբ, հին ուղղագրության առկայությունը չի հիշատակվում: Հին ուղղա-

գրությունը պահպանվում է հնատիպ գրքերի նկարագրութեան ժամանակ (ռուսերեն—մինչև 1800 թ., հայերեն—մինչև 1820 թ.) և միայն այն կատալոգներում, որոնք ունեն հատուկ նշանակութիւն:

Մեծատառերի, արաբական և հռոմեական քվերի, կետագրութեան նշանների, փակագծերի կիրառումը: Մեծատառերը կիրառվում են միայն նախադասութեան սկզբում վերջակետից հետո, հատուկ անուններում, աշխարհագրական անուններում և հիմնարկների ու կազմակերպութիւնների անունների առաջին բառերում օրինակ՝ Երևանի վ. Մ. Մուրադովի անվան Պետ. համալսարան, Լուսավորութեան մինիստրութիւն: Հռոմեական քվերը պահպանվում են միայն վերնագրի և էջերի նշման մեջ, եթե նրանք համարակալված են գրքում հռոմեական քվերով. մյուս բոլոր դեպքերում հռոմեական քվերը փոխարինվում են արաբականով, որպէս ընթերցողներին ալիւի հայտնի քվեր: Կետագրութեան նշանները գրվում են համաձայն այն լեզվի կետագրման ընդհանուր կանոնների, որով նկարագրվում է գիրքը, նույնիսկ այն դեպքում, երբ տիտղոսաթերթի վրա նրանք չեն դրված:

Նկարագրութեան մեջ կիրառվում են երկու տեսակի փակագծեր՝ կլոր և ուղիղ: Կլոր փակագծերը () կիրառվում են այն բոլոր դեպքերում, երբ որևէ փակագծեր են լինում տիտղոսաթերթի վրա (բացի մաթեմատիկական և այլ բանաձևերի փակագծերից, որոնք փոխադրվում են նկարագրութեան մեջ այն ձևով, ինչպէս գրքումն են), ինչպէս և նկարագրութեան մեջ, նախավերնագիրը առանձնացնելու համար (տես № 17, 18 և մյուս օրինակները): Ուղիղ փակագծերը կիրառվում են այն դեպքում երբ նկարագրութեան մեջ մտցվում են տեղեկութիւններ՝ փոխառված շապիկից, նախաբանից, հրատարակչական անոտացիայից, թողարկման տվյալներից և այլն (տես № 20, և այլ օրինակները): Հարկ է նշել, որ «Նկարագրութեան միասնական կանոնները» նախագծում նշված է երկու տեսակ ուղիղ փակագծերի կիրառում՝ մեծ քառակուսի փակագծերի և կիսափակագծերի: Մեծ փակագծերում հանձնարարվում է տեղավորել հետևյալ նյութերը՝ 1) նկարագրվող գրքից վերցրած, բայց կատալոգիզատորի կողմից ձևակերպված տեղեկութիւնները, օրինակ՝ առաջաբանի, ներածական հոգվածի, հրատարակչական անոտացիայի հիման վրա և այլն. 2) տեղեկութիւններ՝ մտցված նկարագրութեան մեջ այլ

աղբյուրներից, օրինակ՝ բիբլիոգրաֆիաներից, բառարաններից, տեղեկատվություններից և այլն: Կիսափակագծերում հանձնարարվում է վերցնել այն տեղեկությունները, որոնք բացակայում են տիտղոսաթերթի վրա և վերցված են շապիկից, գրքի ողնակից (корешок), տպարանական տեղեկություններից և այլն, օրինակ՝ հրատարակության տեղի ու թվի, հրատարակչության նշումը և այլ բիբլիոգրաֆիական տեղեկություններ: Սակայն «Միասնական կանոնները» դեռ չեն հաստատված, այդ պատճառով ներկա ձեռնարկում փակագծերը գործադրվում են այն կանոնների հիման վրա, որոնցով ներկայումս առաջնորդվում են միջին մասշտաբի գրագրանների մեծ մասը—այսինքն՝ ուղիղ փակագծերի միայն մեկ տեսակը (կիսափակագծերը), որոնց մեջ առնվում են բոլոր այն տեղեկությունները, որոնք վերցրված են ոչ տիտղոսաթերթից:

Նկարագրության մեջ գործադրվող խոսքերի կրճատումները: Խոսքերի կրճատումը չի գործադրվում միայն վերնագրում: Նկարագրության մնացած տեքստում կրճատումները գործադրվում են բավական լայն չափերով: Անհրաժեշտ է ուշադիր հետևել, որպիսզի կրճատումները չաղավաղեն առանձին բառերի կամ նախադասությունների իմաստը: Հատկապես լայն գործածություն ունի ածականների կրճատումը, մասնավորապես նրանք, որոնք արտահայտում են առարկայի տեղագրական և ազգագրական հատկությունները, օրինակ, «անգլիականի փոխարեն նկարագրությունում տրվում է «անգլ.», «ուկրաինականի» փոխարեն—«ուկր.», «հայկականի» փոխարեն—«հայկ.» և այլն: Գոյականները հոգվավաղեպ են կրճատվում, ըստ որում կրճատվում են՝ ա) նկարագրության մեջ առավել հաճախ հանդիպող բառերը՝ խմբագիր—խմբ., բիբլիոգրաֆիա—բիբլ., հրատարակություն—հրատ., առաջաբան—առաջաբ. և այլն. բ) գիտական աստիճանները և կոչումները՝ ակադեմիկոս—ակադ., դոկտոր—դ-ր, ինժեներ—ինժ. և այլն. գ) ամիսների անունները հունվ., փետր., ապր. և այլն.

ՆԱԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ՆՐԱ ՏԱՐԲԵՐԸ

Տպագիր երկերի նկարագրությունը կազմված է մի քանի հիմնական մասերից և տարրերից: Ֆորաքանչյուր տարր արտացոլում է տպագիր երկի մեկ որոշակի կողմը—նրա հեղինակը, վերնագիրը, հրատարակության կամ վերահրատարակության

բնույթը, ծավալը և այլն: Այդ տարրերը տեղավորվում են քարտի վրա խիստ որոշակի հաջորդականությամբ:

Այդ տարրերը հետևյալներն են՝

1. Նկարագրության խորագիրը—մեկ բառ, կամ մի քանի բառերի զուգակցումն է, դուրս բերված նկարագրության սկիզբը, որը որոշում է նկարագրության տեղը այբբենական կատալոգում: Անհատ հեղինակների երկերի կամ կազմակերպությունների, հիմնարկների և այլ կոլեկտիվների պաշտոնական նշութների նկարագրության ժամանակ նկարագրության խորագիրը կազմված է հեղինակի ազգանունից և անունից (անվան և հայրանվան սկզբնատառերից) կամ կոլեկտիվի անունից: Այդ այսպես կոչված նկարագրության հեղինակային խորագիրն է: Քարտային կատալոգներում նկարագրության խորագիրը առանձնացվում է առանձին տողով տեսանելիության համար: Այսպես, «Ա. Ս. Պուշկինի երկերի ժողովածուն» նկարագրելու ժամանակ, նկարագրության սկզբում առանձին տողում, որպես խորագիր, առանձնացվում է՝ «Պուշկին, Ա. Ս.»։ «Հաշվետվություն ՀՍՍՄ Գիտությունների Ակադեմիայի» հրատարակությունը նկարագրելու ժամանակ նկարագրության սկզբում հատուկ տողում առանձնացվում է կոլեկտիվի անունը «ՀՍՍՄ Գիտությունների Ակադեմիա»։ Սակայն բոլոր նկարագրությունները չէ, որ ունենում են խորագիր, քանի որ տպագիր որոշ երկեր անմիջականորեն նկարագրվում են վերնագրի տակ: Օրինակ «Պատերազմի օրերին» պիեսների ժողովածուն կնկարագրվի առանց նկարագրության խորագրի, անմիջականորեն վերնագրի տակ:

Համաձայն գույություն ունեցող կանոնների, այբբենական կատալոգում քարտերը դասավորվում են ըստ խորագրի առաջին բառի (մեր օրինակում «Պուշկին» և «ՀՍՍՄ» բառերը), իսկ նկարագրության խորագրի բացակայության դեպքում ըստ վերնագրի առաջին բառի (մեր օրինակում «Պատերազմի» բառը): Այբբենական կատալոգում նկարագրության տեղը որոշող բառը կոչվում է հերթական բառ (երբեմն այն անվանում են «դասավորման բառ»)։

2) Վերնագիր, այսինքն հեղինակի կամ հրատարակչության կողմից աշխատությանը տված անունը: Վերնագիրը փոխադրվում է լրիվ այն ձևով, ինչպես նա տրված է տիտղոսաթերթի վրա. տիտղոսաթերթի բացակայության դեպքում—այն ձևով, ինչպես

տրվում է շապկի վրա. տիտղոսաթերթի և շապկի բացակայության դեպքում—այն ձևով, ինչպես որ տրված է գրքի տեքստի առաջին էջի վերևում: Վերնագիրը սովորաբար չի կրճատվում: Իսկ եթե նա ծանրաբեռնված է միատեսակ, կրկնվող տեղեկություններով, դրանք բաց են թողնվում. և փոխարինվում են բազմակետով: Կատարել առանձին բառերի կրճատումներ վերնագրում, չի թույլատրվում: Վերնագրի նշման աշխարհի մշտությունը նկարագրության մեջ հնարավորություն է տալիս անսխալորեն ձանաչել յուրաքանչյուր հրատարակություն և տարբերել այն մյուս հրատարակություններից:

Եթե վերնագիրը պարզ կամ լրիվ չէ, հարկավոր է այն պարզել կամ ճշտել, ուղիղ փակագծերում ավելացնելով պարզաբանող տվյալներ: Այսպես, օրինակ, քիչ է պարզ «Անցյալից և ներկայից» վերնագիրը, նկարագրության մեջ պետք է պարզաբանված լինի «[Օմսկի մարզի] Անցյալից և ներկայից»:

Երբեմն տիտղոսաթերթի վրա տրված վերնագիրը չի համընկնում շապկի, հրատարակչական կազմի, շմուց—տիտղոսաթերթի կամ գրքի մի այլ տեղում տրված վերնագրի հետ: Այդ դեպքում նկարագրության մեջ տրվում է հիմնական տիտղոսաթերթի վերնագիրը, իսկ մյուս վերնագրերը նշվում են նկարագրության վերջում, ծանոթություններում:

Երբեմն գրքի վերնագիրը ընդհանրապես բացակայում է: Այդ հատկապես հաճախ է հանդիպում երկերի ժողովածուների հրատարակություններում, երբ նշվում է միայն հեղինակը, օրինակ, «Վլադիմիր Մայակովսկի: Հատոր I»: Այդպիսի դեպքերում գրադարանավարը ինքն է կազմում վերնագիրը. և ուղիղ փակագծերի մեջ այն տեղավորում է նկարագրությունում, իսկ գրքի վերնագրի բացակայությունը բացատրում է նկարագրության վերջում՝ ծանոթություններում:

Հանդիպում են հրատարակություններ, որոնց տիտղոսաթերթի վրա վերնագիրը տրված է օտար լեզվով, մինչդեռ մյուս բոլոր բիբլիոգրաֆիական տվյալները և գրքի տեքստը տրված են հայերեն լեզվով: Այդպես է, օրինակ, Վ. Բրյուսովի «Urbi et orbi» գրքի հրատարակությունը: Այդպիսի դեպքերում վերնագիրը բերվում է այնպես, ինչպես նա տրված է տիտղոսաթերթի վրա, այսինքն օտար լեզվով, իսկ նրանից անմիջապես հետո ուղիղ

փակագծերում տրվում է վերնագրի թարգմանությունը կամ սլար-
գաբանումը: Կարիք չկա օտար լեզուների ուսումնասիրության հա-
մար ձեռնարկների նկարագրության մեջ, որոնք սովորաբար հրա-
տարակվում են „Englisch“, „Deutsch“ և նման տիպի վեր-
նագրերի տակ,—տալ նրանց վերնագրերի թարգմանությունը:

Վերջապես հանդիպում են հրատարակություններ, որոնց վեր-
նագիրը մի քանի լեզուներով է: Նկարագրության մեջ վերնագրի
հարցը այդ դեպքերում որոշվում է այնպես, ինչպես տարբեր լե-
զուներով տիտղոսաթերթերի օգտագործման հարցը, այսինքն՝
տիտղոսաթերթի վրա տրված մի քանի վերնագրերից նկարագրու-
թյան մեջ տրվում է գրքի տեքստի լեզուն, իսկ գրքում մի քանի
լեզուներով տեքստի առկայության դեպքում—այն լեզվով վեր-
նագիրը, որ լեզուն գերակշռում է տեքստում:

Հարկ է ուշադրություն դարձնել միևնույն երկրի տարբեր հրա-
տարակությունների տարբեր վերնագրերի վրա: Այսպես, օրինակ,
Վ. Ի. Լենինի միևնույն աշխատությունը հրատարակվել է տարբեր
վերնագրերով՝ «Երիտասարդական միությունների խնդիրները»,
«Ծառ կոմերիտիության 3-րդ համագումարում», «Ինչպիսին
պետք է լինի կոմերիտականը» և այլն: Այդ հատկապես հաճախ է
հանդիպում թարգմանական երկերի հրատարակություններում՝
տարբեր թարգմանիչներ միևնույն երկը լույս են ընծայում տարբեր
վերնագրերի տակ: Նման դեպքերում երկի յուրաքանչյուր հրա-
տարակություն նկարագրվում է իր վերնագրով, բայց նկարագրու-
թյան վերջում ծանոթությունների մեջ պետք է ընթերցողին տեղե-
կացնել մյուս վերնագրերի մասին ևս, որոնցով տվյալ աշխատու-
թյունը լույս է ընծայվել (տե՛ս № № 80, 81 օրինակները):

3. Ներավերնագրային տեղեկություններ: Այդ տերմինի տակ
հասկացվում են զանազան տեղեկություններ, որոնք տեղավորված
են տիտղոսաթերթի կամ շապիկի վրա՝ վերնագրի տակ: Նրանք
նպատակ ունեն ճշտելու երկի բովանդակությունը, նրա գրական
ձևը («Ճառ», «վեպ», «թեզիսներ», «գեկույցում» և այլն), ընթերցո-
ղա-նպատակայնությունը («միջնակարգ դպրոցների սովորողների
համար», «հացահատիկային սովորողների բրիգադիւրների համար»
և այլն), վերահրատարակության բնույթը («2-րդ լրացրած հրատա-
րակություն», «Հրատարակություն առանց փոփոխությունների»,
«Ստերիլոտիպ հրատարակություն»), նշումներ այն անձանց մասին,

որոնք մասնակցութիւն են ունեցել երկի ստեղծմանը (խմբագիր, թարգմանիչ, նկարազարդող և այլն), և ուրիշ տվյալներ, որոնք էական են գրքի բնութագրման համար: Ենթավերնագրային տեղեկութիւնները նկարագրութեան մեջ պետք է բերվեն այն ձևով և հաջորդականութեամբ, ինչպես որ նրանք տեղափոխված են տիտղոսաթերթի վրա: Սակայն դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ղեկավարվել նկարագրութեան կառուցվածքի տրամաբանութեամբ և նպատակահարմարութեամբ, և ոչ թե ձևականորեն տիտղոսաթերթին հետևելով: Եթե տիտղոսաթերթի վրա ենթավերնագրային էական տեղեկութիւնները բացակայում են, այդպիսիք պետք է ուղիղ փակագծերի մեջ տալ վերցնելով դրանք գրքի այլ տեղերից կամ կողմնակի աղբյուրներից: Լինում են դեպքեր, երբ նկարագրութեան տրամաբանութիւնը պահանջում է ենթավերնագրային տեղեկութիւնների մի այլ դասավորում, քան այն դասավորութիւնը, որ տրված է տիտղոսաթերթում: Երբեմն ենթավերնագրի ավելորդ տեղեկութիւնները պետք է բաց թողնել որպես հրատարակութեան բնութագրի համար ոչինչ չտվող և միայն նկարագրութիւնը երկարացնող ու ծանրաբեռնող տեղեկութիւններ: Օրինակ, երբ տիտղոսաթերթի կամ շապիկի վրա թվարկվում են մեծ քանակութեամբ կազմողներ, խմբագիրներ, թարգմանիչներ և այլն, նկարագրութեան մեջ բավական է միայն նշել առաջին երեք կազմողներին և խմբագիրներին և ուղիղ փակագծերի մեջ ավելացնել՝ «և ուրիշ...» բառերը: Երբ նշվում է գլխավոր կամ պատասխանատու խմբագիրը, ամբողջ խմբագրական կոլեգիայից բավական է նկարագրութեան մեջ նշել միայն գլխավոր կամ պատասխանատու խմբագիրին: Ուսումնական ձեռնարկների նկարագրութեան ժամանակ, եթե գրքի ուսումնական բնույթը պարզ է վերնագրից, «Հաստատված է...», «Թույլատրված է...» և նման տեղեկութիւնները չեն նշվում:

Հատկապես հաճախ ենթավերնագիրը պարունակում է նշումներ հրատարակութիւնների կրկնութիւնների և վերահրատարակութիւնների բնույթի մասին: Տեղեկութիւններ այն մասին, թե հերթական որ հրատարակութիւնն է հանդիսանում նկարագրվող գիրքը, նկարագրութեան մեջ միշտ արտահայտվում է արաբական թվերով («Ձ-րդ հրատ...»), թեկուզ և տիտղոսաթերթի վրա նա նշված լինի բառերով («Երկրորդ հրատարակութիւն») կամ հոմեական թվերով («II հրատարակութիւն»): Հրատարակութեան մասին տեղեկու-

թյունները նշվում են այն կարգով, ինչպես նրանք տրված են տիտղոսաթերթի վրա՝ «Զ-րդ հրատ. ստերեոտիպ», «Յ-րդ հրատ., լրաց. և ուղղված» և այլն:

Եթե վերնագրի պրանցման դեպքում առանձին բառերի կրճատումներ չի կիրառվում, ապա ենթավերնագրային տեղեկությունների պրանցման ժամանակ կրճատումները կիրառվում են շատ լայն չափերով, համաձայն բառերի կրճատման ընդհանուր կանոնների:

4. Հրատարակչական տվյալներ: Հրատարակչական տվյալներ կոչվում են այն հիմնական տեղեկությունները, որոնք բնութագրում են տպագիր երկը հրատարակչական կողմից: Այդ տեղեկությունները սովորաբար տեղափոխվում են գրքում տիտղոսաթերթի առաջին էջին կամ շապիկի ներքևի մասում և պարունակում են նշումներ հրատարակության տեղի և թվի մասին, ինչպես և հրատարակչության անունը: Հրատարակչական տվյալները նկարագրության էական տարրերն են, նրանք օգնում են տարբերելու մի հրատարակությունը նրա մյուս հրատարակությունից: Հրատարակության տարեթվի նշումը օգնում է ընթերցողին որոշելու, թե երբ է նա լույս ընծայվել և արդյոք չի հնացել: Հրատարակչության անունը խոսում է տվյալ հրատարակության թեմատիկայի և բնույթի մասին:

Հրատարակչական տվյալները, անկախ դրքի տիտղոսաթերթի վրա նրանց դասավորությունից, միշտ պրանցվում են միօրինակ հաջորդականությամբ: Այդ կարգը հետևյալն է՝ 1) հրատարակության տեղը, 2) հրատարակչության անունը, 3) հրատարակչության տարեթիվը: Յուրաքանչյուր տեղեկություն հաջորդից բաժանվում է ստորակետով:

Հրատարակչության տեղի անունը միշտ նշվում է ուղղական հոլովով և լրիվ ձևով՝ «Սվերդլովսկ», «Թրիլիսի» և այլն: Կրճատումները թույլատրվում են միայն՝ Մոսկվա—Մ և Լենինգրադ—Լ քաղաքների համար: Նախքան այդ քաղաքի վերանվանումը լույս տեսած հին հրատարակությունների նկարագրության դեպքում՝ Պետրոգրադի փոխարեն—«Պդ», Պետերբուրգի փոխարեն—«Պբ», Սանկտպետերբուրգի փոխարեն—«ՍՊբ»: Դրան համանման, ՍՍՌՄ միութենական ռեսպուբլիկաների գրադարաններում, այդ ռեսպուբլիկաների մայրաքաղաքներում հրատարակված երկերի նկարա-

գրութեան դեպքում, կարող են կրճատվել այդ մայրաքաղաքի անունները, օրինակ, Հայկական ՍՍՌ-ի գրադարաններում նկարագրութեան մեջ Երևանի փոխարեն կարելի է գրել ե.:

Հաճախ աշխատութեան տիտղոսաթերթի կամ շապիկի վրա նշվում է հրատարակութեան երկու տեղ: Այդ դեպքում նկարագրութեանում գծիկի միջոցով տրվում է հրատարակութեան երկու տեղը լրիվ ձևով (բացի Մոսկվայից և Լենինգրադից, որոնք տրվում են կրճատ՝ Մ—Լ): Եթե միևնույն հրատարակութեան դեպքում տրվում են հրատարակութեան երեք և ավելի տեղեր, նկարագրութեանում նշվում է միայն առաջինը ուղիղ փակագծերում ավելացնելով՝ և ուրիշ: Եթե տիտղոսաթերթի վրա նշված տեղի անունը տարբերվում է շապիկի վրա նշվածից, նկարագրութեան մեջ նշվում են տիտղոսաթերթի տեղեկութունները, իսկ շապիկի վրա նշված տեղեկութունները հիշատակվում են նկարագրութեան վերջում ծանոթութեաններում: Հրատարակութեան տեղի նշման բացակայութեան դեպքում, նկարագրութեան մեջ նշվում է տպարանի դաշնային վայրը, որը որոշվում է տպարանական տեղեկութունների միջոցով: Այդպիսիների բացակայութեան և հրատարակութեան կամ տպագրութեան տեղը որոշելու անհնարինութեան դեպքում, նկարագրութեան մեջ գրվում է ա. տ., այսինքն «առանց տեղի»:

Հրատարակութեան տեղը նշելուց հետո ստորակետ է դրվում և բերվում է հրատարակութեան անունը, որը լույս է ընծայել տվյալ տպագիր երկը: Հրատարակութեան անունը, ըստ հնարավորին, տրվում է կարճ ձևով ուղղական հոլովով: Եթե շապիկի կամ հրատարակչական նշանի վրա հրատարակչությունը անվանված է կրճատ, ապա չնայած տիտղոսաթերթի վրա նրա լրիվ անվան առկայութեանը, նկարագրութեան մեջ նա տրվում է կրճատ ձևով, օրինակ՝ Գյուղհրատ, Պետհրատ, Քաղհրատ և այլն: Հրատարակչությունը նկարագրութեանում նշելու ժամանակ մի շարք տեղեկութուններ չեն բերվում: Այդպես՝ բաց են թողնվում՝ ա) «հրատարակչություն», «հրատարակություն» բառերը, եթե այդ չի խեղաթյուրում հրատարակչության անունը. բ) հրատարակչության տիպը որոշող բառերը («ակցիոներական ընկերություն», «էտպերատիվ հրատարակչություն», «բաժնետիրական ընկերություն» և այլն). գ) այն կադմակերպութեան անունը, որի իրավասութեան տակ գտնվում է հրատարակչությունը, օրինակ, ՀամէկնիՄ

հրատարակչություն «Երիտասարդ գվարդիա»-ն նկարագրության մեջ ուղղակի տրվում է՝ «Երիտասարդ գվարդիա»:

Եթե հրատարակչության անվան առանձին բառերի դուրս նետելը կարող է հանգեցնել շփոթության, հանձնարարվում է տալ նրա լրիվ անունը: Այդ վերաբերում է, գլխավորապես, դանադան թերթերի, ժուռնալների, գրախանութների, գրապահաստների և այլ հրատարակչություններին: Օրինակ՝ տիտղոսաթերթի վրա նշված է՝ «Կարմիր Աստղ» գրախանութի հրատարակչություն», նկարագրությունում տրվում է՝ գրախանութ «Կարմիր Աստղ». տիտղոսաթերթի վրա — «Պրավդա» թերթի խմբագրության հրատարակչություն», նկարագրությունում տրվում է՝ «Պրավդա» թերթ և այլն: Մասնավոր հրատարակչին նշելու դեպքում բերվում են միայն նրա ազգանունը և անվան ու հայրանվան սկզբնատառերը. իսկ այն դեպքում, երբ նշված են մեկ կամ մի խումբ անձնավորություններ, որոնք հրատարակչություն չեն հանդիսանում, նկարագրության մեջ է տեղադրվում այն ձևը, որով հրատարակիչը նշված է տպագիր դործի վրա, օրինակ՝ Կ. Ա. Տիմիրյազևի աշակերտն. հրատ., բժշկությունների հրատ.: (Այսինչի) միջոցներով: Եթե հրատարակչության հետ միասին գրքի վրա նշված է նաև միավորումը, որի մեջ նա մտնում է, միավորման անունը բաց է թողնվում, օրինակ, տիտղոսաթերթի վրա գրված է՝ «ОГИЗ. Сельхозгиз», կամ՝ «ОНТИ. Госмашиздат», ասլա նկարագրությունում նշվում է գիրքը լույս ընծայող հրատարակչությունը, այսինքն՝ «Сельхозгиз», «Госмашиздат»: Դրա հետ չպետք է շփոթել այն դեպքերը, երբ ամբողջ հրատարակչության անվան նշման հետ մեկտեղ, գրքի վրա նշվում է նրա բաժանմունքը, ֆիլիալը, խմբագրությունը, սեկտորը և այլն: Այդ տեղեկությունները պահպանվում են նկարագրության մեջ այն ձևով, ինչպես որ տրված են գրքի վրա, ըստ որում կիրառվում է նկարագրությունում ընդունված բառերի կրճատումը, օրինակ՝ Պետհրատ, Կուլբիշևի մարզ. բաժ. «ОНТИ. Глав. ред. общетехн-лит-ры»:

Երկու հրատարակչության առկայության դեպքում, հրատարակչության տեղի անալոգիայով, նկարագրության մեջ գծի միջոցով նշվում են երկուսն էլ, երեքի դեպքում — միայն առաջինը ուղիղ փակագծերում ավելացնելով — և ուրիշ: Եթե կան հրատարակչության երկու տարբեր տեղեր և երկու տարբեր հրատարակիչ-

ներ, նկարագրության մեջ բերվում են երկու հրատարակիչները և հրատարակության երկու տեղերը, ըստ որում յուրաքանչյուր հրատարակչություն գրանցվում է նրա գտնված վայրի գրանցումից անմիջապես հետո. տեղեկությունների երկու խմբերը բաժանվում են իրարից վերջակետով:

Տիտղոսաթերթի և շապիկի վրա հրատարակչության մասին տեղեկությունների բացակայության դեպքում, նրանք որոշվում են գրքի վերջի հրատարակչական հայտարարությունից կամ ուրիշ աղբյուրներից: Հրատարակչությունը որոշելու անհնարինության դեպքում, այն բաց է թողնվում և հրատարակչական տվյալներում նշվում է միայն հրատարակության տեղը և տարեթիվը:

Օրինակ № 5

Հրատարակչությունների աճուճների կրճատումը

Նշված է տիտղոսաթերթում	Նշվում է նկարագրությունում
Պետական հրատարակչություն	Պետհրատ
Գաղաքական գրականության պետական հրատարակչություն	Գաղգրականպետհրատ
Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն	Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ.
Սովետական գրող	Սովետական գրող
Սովետական Հայաստանի հրատարակչություն	Սովետական Հայաստան

Հրատարակչությունը նշելուց հետո, նկարագրության մեջ տրվում է տպագիր գործի հրատարակության տարեթիվը: Գրքի վրա ինչ ձևով էլ որ նշված լինի հրատարակչության տարեթիվը (հոռմեական թվերով, բառերով, ամսի և ամսաթվի նշումով և այլն), նկարագրության մեջ այն միշտ նշվում է արաբական թվերով, առանց ավելացնելու «թիվ» բառը և «թ» տառը: Տիտղոսաթերթի և շապիկի վրա տարբեր տարեթվերի առկայության դեպքում, նկարագրության մեջ նշվում է տիտղոսաթերթի վրա տրված տարեթիվը, իսկ շապիկի վրա տրվածը՝ նշվում է ժանոթություններում: Տիտղոսաթերթի և շապիկի վրա տարեթվի բացակայության դեպքում, այն, ինչպես և հրատարակության տեղը, որոշում

են թողարկման տվյալներով, հրատարակությունը տպագրելու թույլտվության տարեթիվով կամ որևէ այլ աղբյուրներով: Այդպիսի դեպքերում հրատարակության թիվը գրանցվում է ուղիղ փակագծերում: Հրատարակության թվի որոշման անհնարինության դեպքում, նկարագրության մեջ գրվում է ա. թ., այսինքն «առանց թվի»:

5. Քանակակաճ բնութագիր: Քանակական բնութագիրը կամ «կուլիացիա» կոչվում է նկարագրության այն մասը, որը բնութագրում է տպագիր գործը նրա քանակական ցուցանիշների կողմից՝ տեղեկություններ գրքի ծավալի մասին (էջերի քանակը), նրա չափը (բարձրությունը, իսկ երբեմն բարձրությունը և լայնությունը սանտիմետրերով), բիբլիոգրաֆիական ցանկերի մեջ գործածվող նկարագրություններում հրեման տրվում են գրքի տիրաժը և գինը: Ոչ մեծ և միջակ դրադարաններում քանակական բնութագիրը պարունակում է միայն գրքի էջերի քանակի նշումը [այսպես կոչված—էջագրությունը (պագինացիան)]:

էջագրություն (էջերի թիվը) քանակական բնութագրի մեջ նշվում է վերջին թվա-սյունի նշման ձևով, այսինքն գրքի վերջին էջի վրա տպագրված թվա-սյունը (КОЛОМ цифра), ավելացնելով այդ թվին «էջ» բառը: Եթե գրքի վերջում էջերի համարակալումը տրվում է ոչ թե ամբողջ էջերով, այլ սյունակներով, ինչպես այդ հաճախ հանդիպում է բառարաններում և այլ տեղեկատու հրատարակություններում, ապա թվից հետո գրվում է «սյուն» կամ «սյունի» բառը, այսինքն «սյունակներ»: Էջերի քանակը նշվում են հոռոմեական և արաբական թվերով, նայած ինչպես են համարակալված գրքի էջերը: Հաճախ գրքում լինում են չհամարակալված էջեր,— դրանք հաշվում և նշում են քանակական բնութագրում: Հաշվում են միայն այն էջերը, որոնք գրքի օրգանական մասը կազմող նյութ են պարունակում՝ բովանդակությունը, առաջաբանը, բիբլիոգրաֆիան, զանազան ցանկերը, ծանոթագրությունները, կոմենտարները և այլն: Այն էջերը, որոնք պարունակում են միայն թողարկման տեղեկություններ, հրատարակչական հայտարարություններ և այլն բաց են թողնվում: Չհամարակալված էջերը նկարագրության մեջ նշվում են հետեյալ ձևով՝ եթե նրանք չորսից ավել չեն, ուղղակի գումարվում են վերջին թվա-սյունին: Այդպիսով, եթե գրքում 60 համարակալված և 4 չհամարակալված

էջ է, նկարագրութեան մեջ գրվում է՝ 64 էջ։ Մեծ թվով չհամարակալված էջերի առկայութեան դեպքում նրանք նշվում են ուղիղ փակագծերում առանձին։ Օրինակ՝ 365, [8] էջ ցույց է տալիս, որ գիրքը պարունակում է 365 համարակալված էջ և գրքի վերջում կա 8 համարներ չունեցող էջ։ [6], 165 էջ, ցույց է տալիս, որ գրքի սկզբում կա 6 չհամարակալված էջ, որից հետո սկսվում է էջերի համարակալումը սկսած 1-ից և վերջացրած 165-ով։

Ոչ սակավ՝ գրքի յուրաքանչյուր բաղադրիչ մաս ունենում է էջերի իր համարակալումը. օրինակ, առանձին համարակալված են տառաբանը, ներածական հոդվածը, ամփոփումը, հավելումը և այլն, այդ դեպքերում համարակալումը սովորաբար լինում է տարբեր տեսակի՝ տառաբանը ունի հոտմեական համարակալում, հիմնական տեքստը — արաբական, գրքի վերջի ծանոթագրությունները — զարձյալ արաբական։ Պագինացիան նկարագրութեան մեջ վերաբարձրվում է այն նույն ձևով և հաջորդականությամբ, ինչպես այն տրված է գրքում։ Այսպես, օրինակ՝ «IX, 860, XIV էջ» պրանցումը խոսում է այն մասին, որ գրքում կա երեք անջատ էջագրություն. «6, 870 էջ» պրանցումը վկայում է գրքում երկու անջատ էջագրության առկայության մասին, որոնք ունեն արաբական համարակալում։ Գրքում երեքից ավել անջատ էջագրության առկայութեան դեպքում, նկարագրությունում էջերի քանակը ուղիղ փակագծերում նշվում է մի ընդհանուր թվով, նրանից հետո՝ «անջ. էջադր.». կրճատ բառերի հավելումով, այսինքն «անջատ էջագրություն», օրինակ՝ [246] էջ անջ. էջադր.։ Նույն կերպ են վարվում, երբ գրքի էջերը բոլորովին չեն համարակալված, օրինակ՝ [348] էջ, վկայում է այն մասին, որ գիրքը, որը ունի 348 էջ, էջերի համարակալում չունի։

Առանձին չկարված թերթերից կազմված, օրինակ, աղյուսակների, ալբոմների և այլն, հրատարակությունների նկարագրության ժամանակ, որոնք զբաղում են շապիկի կամ թղթակալի մեջ, քանակական բնութագրում նշվում է՝ 38 առանձ. էջ թղթակալում։ Իսկ եթե էջերը կամ թերթիկները չեն համարակալված, նրանք հաշվվում և գրանցվում են ուղիղ փակագծերում։

Խոստրացիաներ։ Քանակական բնութագրության մեջ նշվում է նաև հրատարակության մեջ եղած իլյուստրացիաների առկայությունը՝ գծագրություններ, դիագրամներ, սխեմաներ, աշխար-

հագրական և այլ քարտեզներ, նոտային օրինակներ, պորտրետներ և այլն:

Գրքում տարբեր տեսակի իլլուստրացիաների առկայության դեպքում, էջերի քանակի նշմանը ավելացվում է «իլլուստ.» կրճատ բառը: Իսկ եթե իլլուստրացիաները քիչ թե շատ միատարր են, նշվում է իլլուստրացիայի կոնկրետ տեսակը, օրինակ՝ 387 էջ, դիագր. և քարտ. կամ 86 էջ, նոտ., 75 էջ, նկ. և պորտր.:

Հաճախ իլլուստրացիաները տեղավորվում են փակցրած կամ գրքի մեջ մտցրած ներդիր թերթերի վրա, որոնք չեն մտնում էջերի ընդհանուր համարակալման մեջ: Այդ դեպքում ներդիր թերթիկները հաշվվում են և նրանց թիվը նշվում է էջերի թվի կողքին, օրինակ՝ 875 էջ, 16 թերթ. դիագր., քարտ.: Ինչպես երևում է այդ օրինակից, նշվում է ոչ միայն ներդիր թերթերի քանակը, այլև այն նյութերի բնույթը, որոնք տեղավորված են այդ թերթիկների վրա: Եթե գրքում իլլուստրացիաները տրվում են և նրա տեքստի համարակալված էջերի վրա, նկարագրության մեջ նախ նշվում են տեքստի իլլուստրացիաները, իսկ նրանցից հետո ներդիր թերթերի վրա տեղավորված իլլուստրացիաները, օրինակ՝ 275 էջ իլլուստ., 2 թ. նկ.:

6. Նախավերնագրային տեղեկություններ—տեղեկություններ, որոնք տեղավորված են տիտղոսաթերթի կամ շապիկի վրա տպագիր երկի վերնագրից և հեղինակից վերև: Նրանք պարունակում են սերիայի անունը, որի պրակն է հանդիսանում նկարագրվող երկը և այն կազմակերպության անունը, որը այս կամ այն մասնակցություն է ունեցել աշխատության ստեղծման մեջ:

Նախավերնագրային տեղեկությունները նկարագրության մեջ տեղավորվում են կլոր փակագծերում քանակական բնութագրից հետո և տրվում են, ինչպես կանոն, այն ձևով ու հաջորդականությամբ, ինչպես որ նրանք տրված են տիտղոսաթերթի վրա: Երբեմն գիրքը ձևավորված է լինում այնպես,⁹ որ սերիան նշվում է ենթավերնագրային տվյալներում (վերնագրից ջած) կամ տրված է միայն շապիկի վրա: Հարկ չկա այդ հաշվի առնել. բոլոր դեպքերում նախավերնագրային տեղեկությունները, անկախ գրքի վրա նրանց դրաված տեղից, նկարագրության մեջ գրանցվում են իրենց տեղում: Եթե սերիայի նշումը տեղավորված է շապիկի, ընդհանուր տիտղոսաթերթի, տիտղոսաթերթի հակառակ էջի, շմուց-տիտղոսա-

թերթի, մի խոսքով ոչ տիտղոսաթերթի երեսի վրա, ապա այդ նշվում է անմիջապես սերիայի անունից առաջ, այսպես՝ (Շապկի վրա՝ Պատմական վեպերի սերիա), (Շապկ. վրա՝ «Օգոսյոկի» գրադ. № 45), (Ընդհ. տիտղ. վրա՝ «Ստախանովականի գրադարան»):

7. Ծանոթություններ—լրացուցիչ տեղեկություններ տպագիր երկի մասին, նրա ձևավորման առանձնահատկությունների վերաբերյալ՝ տիտղոսաթերթի, շապիկի, հեղինակի անվան ձևի առանձնահատկությունները, նրա մեջ բիրտգրաֆիայի, հավելվածների առկայությունը, ինչպես և գրքի նկարագրվող օրինակի առանձնահատկությունները (թերի օրինակ կամ ընդհակառակը, հատուկ արժեքը, օրինակ՝ գիրքը հեղինակի կամ որևէ ականավոր անձի ինքնագրով և այլն): Մանրամասն նկարագրություններ կազմող խոշոր գրադարաններում ծանոթություններ տրվում են շատ հաճախ՝ նրանցում նշվում են հրատարակության առանձնահատկությունները, օրինակ, կազմի, թղթի բնույթը և այլն: Այդպիսի մանրամասն ծանոթություններ տրվում են նաև հատուկ կատալոգներում, օրինակ, հնատիպ գրքերի կամ ձեռագրերի նկարագրության ժամանակ: Միջին մասշտաբի գրադարաններում ծանոթությունների քանակը սահմանափակվում է ամենաանհրաժեշտ տեղեկություններով, օրինակ՝ տիտղոսաթերթի և շապիկի, ինչպես և գրքի մյուս տարրերի տվյալների միջև եղած տարբերությամբ: Բնչպես նշվել է վերը, երբեմն վերնագիրը տիտղոսաթերթի և շապիկի վրա այլ կերպ է ձևակերպվում, երբեմն հեղինակը նշված է լինում միայն տեքստի վերջում, սերիայի նշումը տրված է միայն հրատարակչական կազմի վրա կամ տրված է այլ ձևով, քան տիտղոսաթերթի վրա և այլն:

Ծանոթությունները կարող են վերաբերել նկարագրության բոլոր տարրերին—նկարագրության խորագրին (հեղինակի կամ կոլեկտիվի անվան ճշտումը), վերնագրին, ենթավերնագրին, հրատարակչական տվյալներին և այլն. ծանոթություններ տպագիր գործի առանձնահատկությունների մասին ամբողջությամբ առնված, տեքստի վերարտադրության մասին, եթե հրատարակությունը տպագրված է ոչ սովորական տպարանական միջոցով, օրինակ՝ «Ապակե-տիպ հրատ.», «Լիտոգ. հրատ.», «Մեքենագիր», տեղեկություններ գրքի տեքստի լեզվի մասին՝ «Տեքստը անգլ. լեզվ.»:

Որոշ դեպքերում ժողովածուների նկարագրության ժամանակ

թվարկվում են նրանց մեջ տեղավորված նյութերը: Այդ կատարվում է «Բովանդ.» ձևով, որից հետո լրիվ կամ ընտրությամբ տրվում է ժողովածուի բովանդակությունը: Ծանոթություններ են կազմվում նաև գրքում տեղավորված և նկարագրության հիմնական տեքստում չհիշված լրացուցիչ նյութերի մասին, օրինակ, տեղեկություններ հավելվածների, լրացումների մասին և այլն:

Խեժ նշանակություն ունեն նկարագրվող հրատարակության ուրիշ հրատարակությունների հետ ունեցած կապի մասին ծանոթությունները, օրինակ, վերամշակումները, վերատպագրությունները և այլն: Անպայման նշվում է բիբլիոգրաֆիայի առկայությունը հրատարակությունում: Շատ կարևոր է նաև նշել գրադարանում գտնվող գրքի օրինակի թերի լինելը, օրինակ՝ «Օր. թերի է՝ չկա էջ 118—120», «Օր. թերի է՝ չկա գծագր.» և այլն:

Ծանոթությունների ձևակերպումը պետք է լինի հակիրճ, պարզ, առանց նկարագրությունը ծանրաբեռնող բառերի:

Պետք է շփոթել ծանոթությունները անոտացիայի հետ, որը ոչ միայն արտաքին տվյալներ է հաղորդում գրքի մասին, այլև հաղորդում է լրացուցիչ տեղեկություններ աշխատության բովանդակության, նրա բնույթի, ընթերցողական նպատակայնության և այլնի մասին: Այդ տեղեկությունները փոխ են առնվում գրքի տեքստից, առաջաբանից, ամփոփումից կամ կազմվում են տեքստի հետ ծանոթանալու հիման վրա:

Հակիրճ անոտացիան, ձևակերպված վերնագրի կամ ենթավերնագրի շարունակության կամ լրացման ձևով, մտցվում է, ինչպես այդ նշվել է վերը, անմիջապես նկարագրության տեքստի մեջ ուղիղ փակագծերում: Ավելի ընդարձակ և մանրամասն անոտացիաները տրվում են նկարագրության վերջում:

**Գլուխ 4: ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ԿԱՏԱԼՈԳԻ ՀԱՄԱՐ: ԿԱՏԱԼՈԳԱՅԻՆ ՔԱՐՏ: ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ՁԵՌԱՅԱԳԻՐ**

Ներկա գրադարանային պրակտիկայում լայնորեն տարածված է քարտային կատալոգը: Յուրաքանչյուր քարտ պարունակում է մեկ տպագիր գործի նկարագրություն:

Առաջին անգամ գրադարանային կատալոգի համար քարտա-

յին սիստեմի առավելութեան հիմնավորումով ելույթ է ունեցել փարիզյան գրադարանավար արքայապետ Ռադիեն 1775 թ.: Ռուսաստանում քարտային սիստեմը կիրառվել է Մոսկովայի համալսարանի գրադարանի կառավարում պրոֆ. Ֆ. Ֆ. Ռեյսի կողմից անցած դարի քսանական թվականներին (1822—1826):

Իր գոյութեան ընթացքում գրադարանային քարտը մի անգամ էլ, որ փոխվել է շտիի և նրա վրա նկարագրութեան հիմնական տարրերը տեղավորելու տեսակետից: Ռուսական մի շարք հնագույն գրադարաններում մինչև օրս պահպանվել են XIX և XX դարի սկզբի կառավարները, կազմված տարբեր շտիի և ձևի քարտերից:

Այժմ Սովետական Միության գրադարաններում, ինչպես և օտարերկրյա գրադարաններում կիրառվում է միջազգային նմուշի կառավարչային ստանդարտ Բարտը, որը ընդունվել է Ամերիկյան գրադարանային ասոցիացիայի 1-ին Մասնաճյուղի կողմից 1876 թ.: Նա ունի 7,5 սմ բարձրություն ու 12,5 սմ երկարություն և պարունակում է տասնեմեկ կապույտ տողեր՝ իրարից 6 մմ հեռավարությամբ: Վերին առաջին տողը տպված է կարմիր ներկով և գտնվում է քարտի վերին եզրից 1 սմ. հեռավորության վրա: Բացի զուգահեռ տողերից, քարտի վրա կան երկու ուղղահայաց կարմիր գծեր՝ առաջինը քարտի ձախ եզրից 1,5 սմ աջ, երկրորդը—ևս մեկ սմ աջ, այսինքն 2,5 սմ նրա ձախ եզրից: Այդպիսով երկու ուղղահայաց գծերի հեռավորությունը միմյանցից հավասար է 1 սմ: Քարտի ներքեում կա կլոր անցք երկաթյա ձողի վրա հաղցնելու համար, որը գտնվում է կառավարչային արկղի ներքին մասում,—այդ կանխում է քարտերը կատալոգից հանելու հնարավորությունը, որը ապահովում է կատալոգի պահպանությունը և նրա մեջ սահմանած քարտերի դասավորության հաջորդականությունը: Անցքը բացվում է քարտի ներքին եզրից 6,5 մմ հեռավորության վրա և քարտի աջ և ձախ եզրից—5,9 սմ միևնույն հեռավորության վրա: Անցքի տրամագիծը հավասար է 7 մմ: Կատալոգային արկղները, որոնց մեջ տեղավորվում են քարտային կառավարները, տանում են մոտ հազար քարտ:

Նկարագրութեան տարրերի դասավորությունը կատալոգային քարտերի վրա նույնպես ստանդարտացված են: Մասնավորապես նկարագրութեան տարրերի որոշակի հաջորդականություն, որոնք գրանցվում են հետևյալ կարգով՝ 1) նկարագրութեան խորագիրը,

2) վերնագիր, 3) ենթավերնագրային տեղեկություններ, 4) հրատարակչական տվյալներ, 5) քանակական բնութագիր, 6) նախավերնագիր, 7) ծանոթություններ: Նկարագրության յուրաքանչյուր տարր ոչ միայն ունի իր սրոշակի տեղը, այլև բաժանվում է մյուսից վերջակետով կամ ստորակետով, կամ սկսվում է նոր տողից, կամ զատվում է նկարագրության նախորդ տարրից մեկ սանտիմետր տարածությամբ:

Նոր տողից (պարբերություն) սկսվում են շտապ տարրեր՝ նկարագրության խորագիրը, վերնագիրը, քանակական բնութագիրը և ծանոթությունները: Մնացած երեք տարրերը—ենթավերնագրային տեղեկությունները, հրատարակչական տվյալները և նախավերնագիրը—գրանցվում են նույն տողերի վրա, նախորդ տարրից հետո: Ենթավերնագրային տեղեկությունները գրանցվում են վերնագրից անմիջապես հետո, իսկ հրատարակչական տվյալները և նախավերնագիրը նկարագրության նախորդ տարրերից բաժանվում են մեկ սանտիմետր տարածությամբ:

Նկարագրության ժամանակ պետք է հենվել քարտերի վրա գտնվող երկու կարմիր ուղղահայաց տողերի վրա: Ամբողջ տեքստը գրանցվում է, սկսած առաջին (ձախ) ուղղահայացից. երկրորդից (աջից)—սկսվում են միայն այն տարրերը, որոնք գրանցվում են նոր տողից, այսինքն վերնագիրը, քանակական բնութագիրը և ծանոթությունները (տե՛ս օրինակ № 7):

Եթե նկարագրությունը չի տեղավորվում մեկ քարտի վրա, այն փոխադրում են երկրորդի, երրորդի վրա և այլն: Երկրորդ և հաջորդ քարտերի վրա փոխադրելու դեպքում նկարագրության շարունակությունը տեղադրվում է այնպես, ինչպես նա կտեղադրվեր առաջին քարտի վրա, եթե տեղ լիներ: Բոլոր քարտերը—շարունակությունները համարակալվում են: Երկրորդ և հաջորդ քարտերի մյուս էջերում տրվում է նկարագրության խորագիրը և վերնագիրը: Այդ հնարավորություն է տալիս իսկույն որոշել, թե որ նկարագրության շարունակությունն է հանդիսանում քարտը այն դեպքում, երբ երկրորդ կամ հաջորդ քարտերից մեկը բաժանված կլինի առաջին քարտից:

Բացի աշխատության նկարագրությունից, քարտի վրա դրվում են մի շարք գրադարանային նշումներ, որոնց միջոցով կարելի է գիրքը գտնել դարակի վրա, որոշել գրադարանում եղած տվյալ

Կատալոգային ֆարտի նմուշ

[illegible]

տպագիր երկի օրինակների քանակը, որոշել ինչ կատալոգներում է նա գտել իր արտադրումը և այլն: Գրադարանային նշումների համար օգտագործվում է քարտի թե մեկ և թե մյուս էջը:

Քարտի երեսի կողմում վերին ձախ անկյունում դրվում է գրքի շիֆրը—գրադարակի վրա տպագիր գործի տեղի ճիշտ նշումը։ Գրքերի սխառեմատիկ դասավորության դեպքում շիֆրը կազմված է ինդեքսից—բաժնի նշումը, որին վերաբերում է աշխատությունն ըստ իր բովանդակության (մաթեմատիկա, ֆիզիկա, բժշկագիտություն և այլն) և հեղինակային նշանից—հեղինակի ազգանվան կամ դասավորման մի այլ բառի առաջին վանկերը։ Շիֆրը դրվում է նաև գրքի տիտղոսաթերթի և պիտակի վրա, որը փակցվում է շապիկի կամ կազմի վրա։ Որպեսզի ընթերցողը գիրքն ստանա, պետք է կատալոգով գտնի նրա նկարագրությունը պարունակող քարտը և գրադարանավարին հայտնի նրա շիֆրը։ Շիֆրը դրվում է բոլոր տեսակի կատալոգների քարտերի վրա—սխառեմատիկ, ալբենական, առարկայական և այլն։

Բացի դրանից, այբբենական կատալոգի քարտերի երկրորդ էջի վրա կատարվում են մի շարք գրադարանային նշումներ: Շրջելով քարտը երեսի կողմից հակառակ կողմը և դնելով անցքը դեպի վեր, անցքից մի քիչ ցածր, քարտի կենտրոնում, կատարվում են հակիրճ նշումներ տվյալ երկրի վերաբերյալ այբբենական կա-

տալոգում՝ ունեցած օժանդակ քարտերի մասին: Քարտի աջ մասում գրանցվում է գրքի լրիվ ինդեքսը, ըստ որի կարելի է լմանալ, թե սխտեմատիկ կատալոգի որ բաժիններում է արտացոլված այդ գիրքը: Այդ նշումներից ներքև քարտի ամբողջ լայնությամբ ձախից աջ գրանցվում են առարկայական ուղբերկաները, որոնց համաձայն գրքի նկարագրությունները տեղափոխված են առարկայական կատալոգում: Վերջապես, ներքևի ձախ անկյունում սյունակի ձևով նշվում են բոլոր գույքահամարները, որոնց տակ այդ գրքի օրինակները գրանցված են գրադարանի գույքամատյանում: Եթե գրադարանն ունի այդ հրատարակությունից մեծ քանակությամբ օրինակներ, կից գույքահամարները նշվում են զծիկի միջոցով օր՝ 16864—16897 ձևով (տե՛ս օրինակ № 8):

Օրինակ N 7

Հիմնական նկարագրության փառի սխեման


		Հեղինակի ազգանունը, անվ. և հայրանվ. սկզբնատառերը:
		Վերնագիր: Ենթավերնագիր՝ երկր. բնույթը, ընթերցողական նպատակայնությունը, նույն հրատարակության կրկնությունների մասին, տեղեկություններ բարձրագույն և այլնի մասին: Հորատարկչական տվյալներ՝ տեղը, հրատ. թիվը:
		Քանակական բնութագիրը՝ էջերի թիվը, իրան տ. ներդիրը (նախավերնագիրը և սերիայի հաշվը):
		Ծանոթություն: 

Պաշտոնական նշումները հնարավորություն են տալիս գրքի քարտերը գտնել գրադարանի բոլոր կատալոգներում: Այդ անհրաժեշտ է լինում նկարագրությունն ուղղելու, նրանց վերաշիֆրավորման, գիրքը գրադարանից հանվելու դեպքում քարտերը կատալոգներից վերցնելու համար և այլն: Այդ տվյալների նշումը այբբենական գլխավոր կատալոգի հիմնական քարտի հակառակ կողմի վրա ապահովում է կատալոգների համապատասխանությունը առ-

կա գրքային ֆոնդերի հետ (կատալոգում չեն լինի կորցրած կամ այլ պատճառներով դուրս եկած գրքերի պատահաբար չհանված քարտեր) և բոլոր կատալոգներում քարտերի ժամանակին ուղղումը¹:

Օրինակ № 8

Այրբենական պաշտոնական կատալոգի հիմնական բառի հակառակ կողմը



Յուրաքանչյուր երկ տասնում է միայն մեկ հիմնական նկարագրություն, որը հետո բազմացվում է օրինակների անհրաժեշտ քանակով բոլոր կատալոգների համար: Սակայն ընթերցողների սլահանջները և գրքերի տեսակները այնքան բազմազան են, որ սահմանափակվել միայն հիմնական քարտերով անհնար է: Կազմվում են մի շարք օժանդակ բարտեր, որոնք լայն կիրառում են գտնում այրբենական կատալոգում: Նրանք օգնում են գտնել երկը նրա լրացուցիչ հատկանիշներով: Այսպես, որոշ գրքեր երբեմն սլահանջվում են ոչ թե հեղինակով, այլ վերնագրով, օրինակ, զեղարվեստական, տեղեկատու երկերը և այլն. որոշ հրատարակություններ, չնայած հեղինակների առկայությանը, սլահանջվում են խմբագիրների անունով, օրինակ, հեղինակային մեծ խմբի կազմած աշխատությունները և այլն: Որոշ դեպքերում հեղինակի ազգանունը նրանց երկերի տարբեր հրատարակություններում

¹ Այն դեպքերում, երբ գրադարանն ունի երկու այրբենական կատալոգ—ընթերցողական և պաշտոնական—այդ նշույններն արվում են միայն պաշտոնական կատալոգի քարտերի վրա:

ձևակերպվում է տարբեր ձևով՝ ծածկանունի, ազգանվան տարբեր ձևերով (օրինակ, շեխական գրող Հաշեկի թարգմանական երկերը հաճախ հրատարակում են Գաշեկ ազգանվան տակ)։ Այդ հանգեցնում է նրան, որ ընթերցողը երբեմն դժվարանում է անգամ իրեն հայտնի երկերի որոնման մեջ։ Այդպիսի դեպքերում նրան օգնության են դալիս օժանդակ ֆարտերը։

Այբբենական կատալոգի համար տարբերակվում են հինգ տեսակ օժանդակ քարտեր.

1. Լրացուցիչ ֆարտեր պարունակում են լրացուցիչ նկարագրություն, այսինքն ավելի հակիրճ քան հիմնականը, որը ունի հիմնական նկարագրությունից տարբեր խորագիր կամ դասավորման այլ բառ։ Այդպես են լրացուցիչ նկարագրությունները երկրորդ կամ երրորդ հեղինակների (համահեղինակներ) վրա, խմբագրի, վերնադրի վրա և այլն։

2. Հղիչ ֆարտեր պարունակում են հղում, այսինքն կարճ գրանցումներ, որոնք հղում են ընթերցողին մեկ խորագրից կամ դասավորման մեկ խոսքից դեպի մյուսը։ Այդպես են հղումները հեղինակի ազգանվան մեկ ձևից մյուսը, հիմնարկի նախկին անունից դեպի նոր անունը և այլն։

3. Տեղեկատու ֆարտեր պարունակում են ինֆորմացիայի բնույթի տեղեկություններ, որոնք նպատակ ունեն հեշտացնել ընթերցողին հարկավոր նյութերի որոնումը կատալոգում, կամ ավելի մանրամասն բիբլիոգրաֆիական ինֆորմացիայի ստանալը հեղինակի կամ երկի մասին։

4. Անալիտիկ ֆարտեր պարունակում են այսպես կոչված անալիտիկական նկարագրություններ, այսինքն երկի ինքնուրույն նշանակություն ունեցող մասի նկարագրությունը, այն հրատարակության նշումով, որտեղ տեղավորված է նկարագրվող նյութը, օրինակ՝ առաջաբանի, ժողովածույում, ժուռնալում տպագրված հոդվածի նկարագրությունը և այլն։

5. Սերիական (միաբերած) ֆարտեր պարունակում են սերիական նկարագրություն, այսինքն սերիայի մեջ մտնող բոլոր պրակների նկարագրությունը սերիայի անվան տակ։ Այն կազմվում է անկախ նրանից, որ առանձին պրակներն արդեն ստացել են նկարագրություն պրակի հեղինակի կամ վերնագրի տակ։

Օժանդակ քարտերը կազմվում են գրքի հիմնական նկարագրության հետ միաժամանակ։

Հաճախ, որպեսզի, ինչպես հարկն է, մշակվի մի երկ գրագրության լուրերը կատալոգների համար, անհրաժեշտ է լինում գրել մինչև 10 և ավել կատալոգային քարտ։ Այդ աշխատատար գործը շատ է դժվարեցնում գրագրարանային աշխատողներին։ Այդ պատճառով գրքերի առավել նպատակահարմար մշակման համար կիրառվում է կենտրոնացված կատալոգավորման կարգով լույս տեսնող պատրաստի տպագիր ֆառը։ Պատրաստի տպագիր քարտի վրա գրագրարանավարը դնում է միայն համապատասխան գրագրարանային նշումներ—գույքահամարները, շիֆրը, որը կիրառվում է տվյալ գրագրարանում, և այլն։

Տպագիր ֆառերը հրատարակվում են 1925 թ. հոկտեմբերից։ Սկիզբը դրվել է ՌՍՖՍՌ Լուսժողկոմատի Քաղ-լուս գլխավոր կոմիտեի կողմից, որ կազմակերպել է Կենտրոնական կատալոգավորման հատուկ բյուրո, որը և ձեռնամուխ է եղել ՌՍՖՍՌ-ում նոր լույս տեսնող գրքերի տպագիր քարտերի թողարկմանը։ Այդ քարտերը կազմվել են ոչ բոլոր, այլ միայն գրքերի այն մասի համար որով լայնորեն օգտվել են մասսայական գրագրարանները, այսինքն մոտավորապես հրատարակվող բոլոր գրքերի $\frac{1}{3}$ -ի համար։

Տպագիր քարտը պարունակել է գրքի համառոտ նկարագիրը և բավական ծավալուն անոտացիա, որը բաց է արել գրքի բովանդակությունը, նրա ընթերցողական նպատակայնությունը, նշումներ նրա խրթինության աստիճանի մասին և մի շարք հանձնարարական—գնահատող մոմենտներ։ Քարտերի վրա տրվել են գրքի շիֆրը. նշումներ սխատեմատիկ կատալոգի համար լրացուցիչ ինդեքսները, այբբենական կատալոգի համար լրացուցիչ քարտերի, իսկ հետագայում նաև առարկայական կատալոգի համար ռուբրիկաներ։

Այժմ անոտացիայի ենթարկված քարտերը հրատարակում է Կուլտ-լուս գրականության հրատարակչությունը (ռուսերեն լեզվով)։ Հարկ է նշել, որ վերջին տարիներում հրատարակվել են նաև հատուկ համառոտ կենսագրա-բիբլիոգրաֆիական տվյալներ՝ հեղինակի համառոտ բնութագիրը, առավել հայտնի երկերի թվարկումը, ծննդյան և մահվան տարեթվերը, հեղինակի պորտրեն պարունակող տեղեկատու և բաժանիչ քարտեր։ Այդ քարտերը նպաստել

Օրինակ № 9

Անոտացիայի ենթաբնիված տպագիր փարո

Տվարդովսկի Ա.

Մեջնասան: Պոեմ: — 1-րդ հրատ. Մ. Սոփ. գրող, 1939. 120 էջ
+ 6 թ. իլյուստ. 6 ս. 25 կ կաղնով, 10.000 օր :

Պոեմը իր գլուղի վերջին մենատնտես Նիկիտա Մարգուսովի մասին է: Ննթարկվելով հուլակային աղիտացիային, Նիկիտա Մարգուսովը որոշում է փնտրել ոչ կոլխոզային Մեքսիկայում և ճանապարհ է ընկնում: Նա շատ է ճամբորդում, դիտում, բայց ամենուրեք տեսնում է նոր, ծագելով կոլխոզային գյուղերի և ավանների ունեւոր կյանքը, ստալինյան կոլխոզային կարգին անսահմանորեն նվիրված առույգ, ուրախ մարդկանց: Հանկանալով իր խոր սխալը և համոզվելով, որ նա մինչև այժմ սխալ ճանապարհով է գնացել, Նիկիտան լռում է անցյալի հետ և որոշում է մտնել կոլխոզ:

(19, 41) 39—57 15

Հմկ Գրադարանադիտական ին-տ:

տիր. 2525 Մոսկ. մարզ.
քաղիկա Բ. 10427

են կլասիկների և այլ հեղինակների լավագույն երկերի տարածմանը ընթերցողների մեջ: Նրանք մատուցական գրադարանների կողմից օգտագործվում են ընթերցողական կառավարողների համար և տեղեկատու-բիրլիոգրաֆիական աշխատանքներում:

Օրինակ № 10

Տպագիր տեղեկատու փարո հեղինակի մասին

(անգլիսի)

(Բարսը կրկնակի է: Տեքստ բերված է ոչ լրիվ)

ԲԵԼԻՆՍԿԻ, ՎԻՍՍՐԻՈՆ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ

(1811—1848)

Բելինսկու
աղբարեն

Ռուս մեծ քննադատ Բելինսկին ծնվել է Նավա-տուրդային բժշկի բնատնիքում: Գիթնադիտա ավարտելուց հետո ընդունվել է Մոսկվայի համալսարանը, բայց 1832 թ. հեռացվել է իր դրած Դմիտրի Կալինին գրամայի համար, որն ուղղված է եղել ճորտատիրական իրավունքի դեմ:

Անդնելով գաղափարական որոնումները բարդ ուղի Բ. եկել է ճորտատիրական կարգերի անհաշտ քաղաքական և կանգնել է Ռուսաստանի ազատագրման հա-

մար մարանդողների առաջին շարքում:

Առավել լրիվ Բ. իր սեկոյուցիոն, հակաճորտատիրական հայացքներն աշխատանքով է ևսամակ Գողովին: գործում, որտեղ

Տպագիր տեղեկատու քարտ սլարբերական հրատարակությունների
համար

(Քարտը կրկնակի է: Տեքստը բերված է ոչ լրիվ)

ՏԵԽՆԻԿԱ—ՄՈԼՈՒԴՅՈՒԹ

«Տեխնիկա
մոլոլյուժի»
Ժուռնալի շապիկը

Համ. ԼԿԵՄ Կի հանրամատչելի արտադրա-
կան—տեխնիկական և գիտական ամսագիր:

Ժուռնալը նախատեսված է ընթերցողների
ամենալայն խավերի—կոմերիտականների, երի-
տասարդության, բանվորների, կոլխոզնիկների,
միջնակարգ և բարձրագույն դպրոցները սովոր-
ողների, երիտասարդ մասնագետների, կոն-
ստրուկտորների և գյուղատարերի համար:

Ժուռնալը լուսարանում է գիտություն և
տեխնիկայի նորագույն պրոբլեմները ՄՍՄ և
աբստրակտների գիտությունների կազմակերպչներին
նվաճումները, ստացված և պաշտպանական գործի տեխնիկան:

Ժուռնալը պարունակում է արտադրական օգնական արդյունաբե-
րության և տրանսպորտի երիտասարդ տաղանդավորների աշխա-
տանքի մեթոդների մասին, ծանոթացնում է ընթերցողներին սովե-
տական երիտասարդ գիտնականների ակադեմիկոսներին և

ՌՍՖՍՌ-ի Պետական Կենտրոնական գրադարանը, որը
1935 թ. վերակազմվել է Համամիութենական գրադարանի,
1927 թ. հունվարի 1-ից ձեռնամուխ է եղել քարտերի տպագրմանը
խոշոր հանրային և գիտական գրադարանների համար: Գրադա-
րանի քարտերը պարունակում են ՌՍՖՍՌ-ում լույս տեսնող բոլոր
գրքերի մանրամասն և ճիշտ նկարագրություններ, բաց անտա-
ցիաներ չեն տալիս: Քարտերի վրա տպագրվում է տասնորդական
կլասիֆիկացիայի խնդեքը և տրվում են ցուցումներ ալբենական
կատալոգի լրացուցիչ նկարագրությունների համար, իսկ 1932 թվից
նաև առարկայական ռուբրիկաներ առարկայական կատալոգի
համար: Համամիութենական գրադարանը տպագրում է նաև
հղիչ և տեղեկատու քարտեր, որոնց մեջ բացահայտվում են ծած-
կանունները և հաղորդվում են տեղեկություններ այս կամ այն

նյութերը հրատարակող կազմակերպությունների անունների փոփոխության մասին:

1929 թվից Մ. Ե. Սալտիկով—Շչեդրինի անվ. Պետական հանրային գրադարանը Վենինգրադում սկսել է իր գրքային ֆոնդերի քարտերի տպագրումը: Գրադարանը հրատարակում է քարտեր միայն մինչև 1927 թ. լույս տեսած հրատարակությունների համար, այսինքն մինչև այն ժամանակ, երբ ՌՍՖՍՌ-ի ամբողջ

Օրինակ № 11

Հայկ. ՍՍՌ պետական գրապլատի տպագիր ֆարտք

ՄԻՐԻՄԱՆՅԱՆ, ԽԱՉԱՏՈՒՐ

... Հոդագիրություն: Ե., հրատ. և տպ. Գյուղհրատի: 1936 [կազմի վրա՝ 1935]:

Կազմ, [211] էջ, 15 ներդիր թ. էլյուստր. (22×15) 3.000 օր. 6 ո.

Վերնագրից առաջ՝ Խ. Միրմանյան:

Վերջին էջի վրա՝ 247 [?] էջ:

Մ ա տ ե ն ա գ ի տ.՝ «Օգտագործված գրականության ու նյութերի ցուցակ» (47 անուն) ռուս., անգլ., գերմ. և հայեր. լեզ. — [36 Հ 173]

631.4

ՀՍՍՌ Պետ. գրապլատատ

№ 190 XIIIԱ Գտ. 3/36

Օրինակ № 12

Համամիութենական գրապլատի տպագիր տեղեկատու ֆարտք

ԿԱՐԱՔԱՇԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

1937 թ. հոկտեմբերից Համամիութենական գրապլատի քարտերի վրա այս կրեկտիվ հեղինակը նկարագրությունների խորագրերում տեղադրվում է՝ Կարաբախի պղնձածուլական գործարան ձևով:

Գործարանի բոլոր հրատարակությունները կառավարվում տես այդ խորագրի տակ:

տպագիր արտադրանքը սկսել է սպասարկվել գրապալատի քարտով: Այդպիսով, Լենինգրադյան քարտը պետք է պարունակի ռուսական մինչև ռուսացիոն և սովետական գրքի նկարագրությունը այն ժամանակաշրջանի համար, երբ չկային Գրապալատի տպագիր քարտերը:

Հանրային գրադարանի և Համամիութենական գրապալատի աշխատանքների հետևանքով հնարավորություն է ստեղծված նախևառաջ ռուսական գրքի շատ թե քիչ լրիվ կատալոգը նախ տպագիր քարտերից կազմած քարտարանի ձևով, ավելի ուշ՝ տպագրական ճանապարհով հրատարակված ռուսական գրքի ազգային բիրլիոգրաֆիայի հատորների ձևով:

Միութենական ռեսպուբլիկաների գրքային արտադրանքի համար մինչև Հայրենական Մեծ պատերազմը քարտեր հրատարակել են Ուկրաինական ՍՍՌ, Բելոռուսական ՍՍՌ, Ադրբեջանական ՍՍՌ, Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ գրապալատները:

Որոշ գրադարաններ իրենց կատալոգների համար հաջողությամբ օգտվում են գրապալատների տպագիր քարտերից: Որպես օրինակ կարելի է նշել Վ. Ի. Լենինի անվ. ՍՍՌՄ Պետական գրադարանը, Պետական հանրային պատմական գրադարանը և այլն: Սակայն գրադարանալին կատալոգներում տպագիր քարտերը մինչև այժմ, ցավոք սրտի, լայն կիրառում չեն ստացել:

Այդ բացատրվում է հիմնականում նրանց լույս ընծայման ուշացումով. նոր գրքերը գրադարանները ձեռք են բերում ավելի շուտ, քան այդ գրքերի քարտերն են լույս ընծայվում, և գրադարանները, չցանկանալով ուշացնել նոր գրքի հրամցումը բնթերցողին, ստիպված են իրենք նկարագրել այն:

Ձեռագիր և մեքենագիր փառեր: Գրադարանային պրակտիկայում լայն կիրառություն ունեն ձեռագիր և մեքենագիր քարտերը: Տպագրական մեքենայի կիրառումը արագացնում և էականեցնում է կատալոգավորման պրոցեսը և հնարավորություն է տալիս կատալոգների մեջ մտցնել ավելի պարզ և այդ պատճառով օգտագործման համար ավելի հարմար մեքենագրված քարտեր: Սակայն տպագրական մեքենաներ և նկարագրության հետ ծանոթ մեքենագրուհիներ ոչ բոլոր գրադարաններում կան: Դրա համար գրադարանների մեծ մասում հարկ է լինում գրքերը նկարագրել ձեռքով հատուկ գրադարանային ձեռագագրով:

Գրադարանային ձեռագագիր: Ստանդարտացված գրադարանային ձեռագագիրը քարտերին տալիս է արտաքին միակերպություն և կատալոգը ավելի հարմար ու հեշտ է դարձնում նայելու համար, քան այն կատալոգը, որի քարտերը գրված են սովորական արագագիր տարբեր ձեռագրերով:

Գրադարանային ձեռագագրի առանձնահատկությունները հետևյալներն են՝ 1) բոլոր տառերը և թվերը գրվում են անշատակի, առանց իրար հետ կապելու. 2) նրանք ուղղահայաց են, այսինքն գրվում են առանց թեքության, 3) նրանք բոլորը գրվում են առանց սղմումների. 4) տառերը և թվերը ունեն խիստ որոշակի ձև ու չափ. 5) տառերի, բառերի և նախադասությունների միջև հաստատվում են խիստ որոշակի տարածություններ:

Տառերի ու թվերի չափերը ելնում են գրադարանային քարտի տողերի միջի տարածությունից¹:

¹ Ռուսերեն տեքստում գրադարանային ձեռագագրի ուսուկան տառերի նկարագրության փոխարեն տալիս ենք հայերեն ձեռագագիր տառերի նկարագրությունը:

Այդ հաշվով հայերեն փոքրատառերի բարձրության համար նկատի պետք է ունենալ երեք դեպք:

ա) Այն տառերը, որոնք գրվում են երկու տողի մեջ (ա, ո, ք, ս, ա և այլն) բարձրությունը համար պետք է ընդունել երկու միլիմետր:


բ) Այն տառերը, որոնք գրվում են երեք տողի մեջ (բ, գ, դ, ե, զ, ժ, ղ և այլն) բարձրությունը համար պետք է ընդունել երեք և կես միլիմետր:

գ) Այն տառերը, որոնք գրվում են չորս տողի մեջ (ի, կ, լ, վ, ֆ, ղ և այլն) տառի բարձրությունը պետք է լինի հինգ միլիմետր, ըստ սրում երեք և կես միլիմետր տողից վերև, մեկ և կես միլիմետր տողից ներքև: Իսկ ծ և ձ տառերի բարձրությունը պետք է հավասար լինի երեք միլիմետրի. «է» տառի բարձրությունը համար պետք է ընդունել չորս միլիմետր, որից 3¹/₂ մմ տողից վերև, կես մմ տողից ներքև:

Փոքրատառերի լայնությունը հավասար պետք է լինի երկու միլիմետրի, բացի ա, դ, ղ, ժ, լ, ժ, ի, դ, մ, պ, ս, ղ, տ, փ և տառերից, որոնց պետք է առ ևերեք մմ լայնություն: Փոքրատառերից լ, յ, է, և տառերի հորիզոնական գծերի երկարությունը պետք է լինի մոտ մեկ մմ:

Մեծատառերի բարձրությունը պետք է զերցնել երեք և կես մմ, բացի է, Ջ, Ջ, Ջ, Ք տառերից, որոնց երկարությունը պետք է լինի 4¹/₂ մմ ընդ որում ¹/₂ մմ տողից ներքև: Մեծատառերի լայնությունը պետք է հավասար լինի երեք մմ բացի Գ, Դ, Թ, Ժ, Ն, Ղ, Մ, Ռ, Վ և Փ տառերից, որոնց լայնությունը հավասար է չորս մմ:—Մ. Խ.

Տառերի և բլերի բարձրության և լայնության հարաբերությունը




Թվերի բարձրությունը պետք է լինի 3 մմ, լայնությունը՝ 2 մմ:

Առանձին տառերի հեռավորությունը բառերի մեջ պետք է ընդունել մոտ մեկ մմ, նախադասության մեջ բառերի հեռավորությունն իրարից՝ 4 մմ, նախադասությունների հեռավորությունն իրարից նույնպես չորս մմ, ընդ որում հեռավորությունը պետք է վերցնել կետադրության նշանից:

Գրադարանային ձեռագագրով գրելիս պետք է աշխատել միանգամից գրել ամբողջ տառը, առանց ընդհատելու այն: Այդ պահանջվում է նրա համար, որ ինչպես գրադարանային փորձը ցույց է տվել, երբ տառը միանգամից է գրվում պահպանվում է նրա միաձևությունը և արագ է կատարվում: ...Սակայն կան տառեր, որ պետք է գրել երկու և ավելի նվազներով (տես օրինակներ № 13, 14, 14ա)¹:


¹ Հայերեն գրադարանային ձեռագագրի տառանձնահատկությունների մասին տեքստը և օրինակները վերցված են Ա. Բաբայանի «Գրադարանային ձեռագագիր» գրքից՝ Ե., Լուս՝ Բառ. 1989: էջ 9—12:—Ծ. Բ.

Հայերեն այբուբենի տառերը գրելու եղանակներն ու նվագները



Օրինակ № 14 ա

Թվանշանների եղանակներն ու նվագները



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գլուխ 5: ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՆՎԱՆ ՏԱԿ

Հեղինակ կոչվում է ոչ միայն աշխատություն գրող անձնավորությունը, այլ նաև զանազան հեղինակների գրվածքների հատվածներից կամ մի քանի աշխատություններից դիրք կազմողը: Այդպիսով, տարբեր պոետների բանաստեղծություններից, զանազան հեղինակների պատմվածքներից ժողովածու կազմողը, ժողովրդական բանահյուսության, ասացվածքների, երգերի, զրուցավեպերի և այլնի հավաքողը նկարագրություն ժամանակ դիտվում է որպես իր կազմած գրքի հեղինակ: Հիմնարկները, կազմակերպությունները և այլ կոլեկտիվներ դիտվում են որպես իրենց պաշտոնական նյութերի հրամանների, հաշվետվությունների, որոշումների հեղինակներ և այլն:

Տպագիր երկի նկարագրության ժամանակ նախ և առաջ անհրաժեշտ է որոշել թե ով է հանդիսանում նրա հեղինակը: Եթե հեղինակը չի նշված տիտղոսաթերթի կամ շապիկի վրա, սխառ է նայել, թե արդյոք նա չի՞ նշված տեքստի վերջում, առաջաբանում, ծանոթություններում և այլն: Եթե այդ միջոցով ևս չի հաջողվում որոշել հեղինակը, նա սահմանվում է բիբլիոգրաֆիական աղբյուրներով:

Նկարագրության խորագրի մեջ տրվում են հեղինակի ազգանունը և անվան ու հայրանվան սկզբնատառերը: Խոշորագույն գրադարաններում այդ սկզբնատառերը բաց են արվում և նկարագրության խորագրում նշվում են հեղինակի լրիվ անունը և հայրանունը, իսկ օտարազգի հեղինակների համար—անձնական անունը և ցեղական անունները:

Հեղինակի ազգանունը նրա բոլոր երկերի նկարագրության ժամանակ խորագրում տրվում է միանման ձևով: Այն տրվում է միշտ ուղղական հոլովով: Եթե տիտղոսաթերթի վրա այն տպագրված է վերնագրից ներքև կամ բերված է վերնագրի մեջ

անուական հոլովով, խորագրում այն տրվում է սահմանված ձևով, իսկ նկարագրության տեքստում կրկնվում է այն ձևով և հաջորդականությամբ, ինչպես որ տրված է տիտղոսաթերթի վրա: Օրինակ, տիտղոսաթերթի վրա վերնագիրն է՝ «Ընկեր Ստալինի զրույցը Սմերիկյան Սկրիպս Հովարդ Նյուդիբելիերս» միավորման նախագահ տարոն Ռոյ Հովարդի հետ», — պետք է նկարագրության խորագրում գրել՝ Ստալին, Ի. Վ., իսկ վերնագիրը գրանցել լրիվ, ինչպես որ նա տրված է գրքում: Պաշտոնը, գիտական կոչումը, մասնագիտությունը (ակադեմիկ, պրոֆեսոր, ինժեներ և այլն), որոնք երբեմն բերվում են տիտղոսաթերթի վրա, նկարագրության խորագրում չեն նշվում: Գիտական կոչումը, նախած տիտղոսաթերթի ձևավորմանը, նշվում է նկարագրության տեքստում կամ ծանոթություններում:

Օրինակ № 15

Նկարագրություն հեղինակի տակ
(տիտղ. ք. տես էջ 16)

		Մարքս, Կ.
		Գիշխողության արհեստությունը:
		Պատասխան Կ. Պրուդոնի «Արհեստության
		գիշխողությանը»: Ե. Հայպետիան
		1948:
		235 էջ: (ՀԱՄԿ(Բ)ՊԿԿ-ին Կից Մարքսի
		էնգելսի - Լենինի հե-տ):

Այն գրքերի նկարագրության ժամանակ, որոնց հեղինակները տիտղոսաթերթերի վրա նշված են «կազմեց» «հավաքեց» և այլն (տես № № 16, 17 օրինակները), այնպես, ինչպես և այն գրքերի նկարագրության ժամանակ, որոնց հեղինակները կամ կազմողները տիտղոսաթերթի կամ շապիկի վրա չեն նշված (տես օրինակ № 18), վերնագրերի վրա տրվում են լրացուցիչ նկարագրություններ քանի որ և մեկ և մյուս դեպքում ընթերցողը հաճախ գիրքը որոնում է վերնագրով:

Օրինակ № 16

Գրքի տիտղոսաբերը կազմողի նշումով

КОМИТЕ ПО ДЕЛАМ КУЛЬТУРНО ПРОСВЕТИТЕЛЬНЫХ
УЧРЕЖДЕНИЙ ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМ. ССР.
ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
АРМЯНСКОЙ ССР им. А. Ф. МЯСНИКЯНА

ՀԱՅԿԱՆ ԱՍՏՈՒՄԱՆԻ ՄԱՍԻՆ ԱՐԴԱՆԻՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԻ
ՀԱՅԿԱՆ ԱՍՏՈՒՄԱՆԻ ՄԱՍԻՆ ԱՐԴԱՆԻՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԿԱՆ ԱՍՏՈՒՄԱՆԻ ՄԱՍԻՆ ԱՐԴԱՆԻՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ХАЧАТУР АБОВЯН

1848—1948

К 100-летию со дня смерти

ԽԱՀԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ

1848—1948

Մահվան 100-ամյակի տոմարով

Составил
Арам Бабахан

Կազմեց
Արամ Բաբախյան

ԵՐԵՎԱՆ 1948

ԵՐԵՎԱՆ 1948

Օրինակ № 17

Այն գրքի նկարագրությունը, որի տիտղոսաբերի վրա նշված է
կազմողը

		Գուրպիչ, Ռ. Մ.
		Պրակտիկ բարեփոխների ժողովա-
		նու կոլխոզային կոմիտեի գործարան-
		ների վարպետներին: Կապ. և մշակ. բն-
		օրն Ռ. Մ. Գուրպիչը: Մ., 1938:
		14 էջ, գծագր. (Մոսկ. մարզ. գործ-
		կոմի Երևանյան թանգարանի վարչ.
		կոմիտեի արտատրուքյան կապակերպ-
		ման գծով):

Երկու հեղինակի կամ կազմողների աշխատության նկարագրում ժամանակ խորագրի մեջ դուրս են բերվում երկու հեղինակի ազգանունները և անվան, հայրանվան սկզբնատառերը, միացված «և» շաղկապով («և» շաղկապը դրվում է նաև այն դեպքում, երբ տիտղոսաթերթի վրա այն բացակայում է):

Օրինակ № 18

Պրիի նկարագրությունը, որի հեղինակը նշված է տեխտի վերջում

		Ավիլոյ, Վ. Մ.
		Դպրոցի գրողներ, Հետևակի և սաայր-
		ճեքի գրողներ և խմբի գործողությունները
		գերմանացիների դեմ: Ելքակապություններ:
		Ա. 1942:
		14 էջ, ա. տ. թ. և ծալ. (Սաայրների մար-
		տակ և պրակտիկայից: 2):
		Հեղին. հե. տեխտի վերջ: Մայր Ավիլոյ,
		Վ. Մ.

Երկու հեղինակի (կամ կազմողների) աշխատությունը նկարագրելու ժամանակ երկրորդ հեղինակի, այսինքն համահեղինակի (կամ կազմողի) վրա կատարվում է լրացուցիչ նկարագրություն, քանի որ մի կողմից ընթերցողը կարող է հիշել աշխատությունը երկրորդ հեղինակի (համահեղինակի) անվան տակ, մյուս կողմից — այբբենական կամ հեղինակային կատալոգը պետք է բիբլիոգրաֆիական նպատակների համար յուրաքանչյուր հեղինակի երկերը հավաքի մի տեղ, անկախ նրանից, թե նրա անունը տիտղոսաթերթի վրա որ տեղում է նշված (առաջին կամ երկրորդ):

Այն հրատարակությունը, որի նկարագրությունը տրված է № 20 օրինակում (Ս. Ազարևի և Ն. Բալաշովի գիրքը) կարող է ընթերցողի կողմից պահանջվել նաև վերնագրի տակ, քանի որ հեղինակները չեն նշված շապիկի վրա, որի մասին հիշատակված է ծանոթություններում: Ընթերցողի սկզբնական ծանոթությունը

Օրինակ N 19

Երկու հեղինակով գրքի նկարագրությունը

		Մարտ, 4. և Էնգելս, Ֆ
		Սոցիալիստական դեմոկրատիայի Ալյան-
		սը և բանվորների Միջապգային Ուկերու-
		թյունը: Հաճայի Միջապգային Կենդրոնի
		որոշումով հրապարակված պեկույում և
		փաստաթղթեր: Ե., Փար: Գրակ. պետհրատ,
		1941
		183 էջ. (ՀԱՄԿ(Բ)Պ ԿԿ-ին կից Մարքսի-
		Էնգելսի - Լենինի ին-տ):

Օրինակ N 20

Այն գրքի նկարագրությունը, որի հեղինակները չեն նշված
շապիկի վրա:

		Ապրիլ, Ս. և Բալաշով, Ա.
		Ռուսա-ֆինիական գործ: Կարմիր բա-
		նակալիկների, Եսիսայիկականների և Պաշտ-
		ապիսիսիսի անգամների համար: Զորք Շուկ.
		հրատ: Մ. Ռապինիատ, 1939:
		22 էջ. իրատ: (Շպ. վրա՝ Ռապինիատայա-
		կան Գրադարան):
		Շպ. վրա եեղ. չեն նշված:

Գրքի հետ հաճախ սահմանափակվում է միայն շապիկով նա
զիրքը տեսնում է գրախանութի պատուհանի յուրահանգեսում,
գրադարանի ապակեպատ յուրափակվում և այլն, գիրքը նրան
հետաքրքրում է իր վերնագրով, բայց ով է նրա հեղինակը կամ
կազմողը, նա չգիտի: Դրա համար տվյալ դեպքում անհրաժեշտ է

լրացուցիչ նկարագրութիւնն անել վերնագրի վրա, որով ընթերցողը պետք է որոնի աշխատութիւնը կատարողում կամ նրա մասին հարցնի գրադարանավարին:

Քարտագրողի աշխատանքը խնայելու համար լրացուցիչ նկարագրութիւնը կազմվում է ավելի հակիրճ, քան հիմնականը, և պարունակում է հիմնական նկարագրութեան ամենաէական տարրերը՝ 1) հեղինակ, 2) վերնագիր, 3) ենթավերնագրից միայն նշում հրատարակութեան կրկնութեան մասին և, հազվագիտութեան դեպքերում, երբ առանց այդ տեղեկութիւնների գիրքը կարող է շփոթվել մեկ ուրիշի հետ կամ վերնագիրը պաշանջում է այդ լրացումը—գրքի բնույթի նշումը, 4) հրատարակութեան տեղը, 5) հրատարակութեան տարեթիվը:

Լրացուցիչ նկարագրութեան ամենաէական տարրերութիւնը հիմնականից կայանում է նրանում, որ լրացուցիչ նկարագրութիւնն ունի այլ խորագիր, այսինքն սկսվում է մի այլ դասավորման բառից, քան հիմնականը:

Գոյութիւնն ունի լրացուցիչ նկարագրութեան երկու տեսակ՝ 1) անվանական լրացուցիչ նկարագրութիւն, որի դասավորման բառը հանդիսանում է հեղինակի, կամ խմբագրի, կամ այն անձի անունը, որին նվիրված է երկը և այլն, 2) լրացուցիչ նկարագրութիւն վերնագրի վրա, որի դասավորման բառը հանդիսանում է վերնագրի առաջին բառը: Ինչպիսի լրացուցիչ բառ էլ որ կազմվելու լինի, այն ի տարբերութիւն հիմնական նկարագրութիւնից, գրվում է երկրորդ ուղղահայացից:

Լրացուցիչ նկարագրութիւնը վերնագրի վրա ըստ ձևի տարբերվում է և հիմնական և անվանական լրացուցիչ նկարագրութիւններից: Ողջ դասավորութիւնը, դիտողականութեան տեսակետից, ենթարկված է երկու խնդրի—զատել վերնագրի առաջին բառը՝ քարտերը կատարողում դասավորելու հարմարութեան և դտնելու համար, ինչպես և վատել հեղինակի ազգանունը (հեղինակային խորագիրը), այդպիսով կապելով լրացուցիչ նկարագրութիւնը հիմնականի հետ:

Երեք հեղինակի կամ կազմողների աշխատութիւնը, եթե նրանք նշված են տիտղոսաթերթի կամ շափկի վրա, նկարագրվում է առաջին հեղինակի անվան տակ խորագրում «և ուրիշ» բառերի հավելումով: (Այն գրադարաններում, որոնք հեղինակների

անձնական անունները խորագրում բաց են անում «և ուրիշ» բառերը չեն դրվում)։ Սակայն բոլոր երեք հեղինակները նկարագրությունում պետք է նշվեն այն ձևով, որով նրանք տրված են տիտղոսաթերթի կամ շապկի վրա՝ ենթավերնագրային տեղեկություններում,—եթե գրքի վրա հեղինակները կամ կազմողները նշված են վերնագրից ներքև, և ծանոթություններում,—եթե գրքի վրա նրանք նշված են վերնագրից վերև։ Եվ այդ և մյուս դեպքում հեղինակների ազգանունները և անվան ու հայրանվան սկզբնատառերը տրվում են այն ձևով, որով նրանք նշված են գրքի վրա, այսինքն՝ կրկնվում են բոլոր հեղինակները, այդ թվում և առաջինը, որը նշված է նկարագրության խորագրում, և այն հաջորդականությամբ, ինչպես նրանք տրված են տիտղոսաթերթի կամ շապկի վրա, առանց փոխակերպության, այսինքն առանց անվան ու հայրանվան սկզբնատառերի և ազգանվան տեղափոխությունների։ Այն դեպքերում, երբ վերնագրից վերև նշված հեղինակները թվարկվում են ծանոթություններում, այն սկսվում է «վերն. առաջ հեղ»։ կրճատ բառերով, որից հետո հեղինակները թվարկվում են տիտղոսաթերթի վրա տրված ձևով և հաջորդականությամբ։

Երեք հեղինակների աշխատության նկարագրության ժամա-

Օրինակ № 21

Անվանական լրացուցիչ նկարագրություն երկուրդ հեղինակի վրա
(համահեղինակի—տես օրինակ № 19)

		ԷԳԳԵՆ, Ֆ.
		Մարտ, Կ. և ԷԳԳԵՆ, Ֆ.
		Առցիալիստական դեմոկրատայի Ալ-
		յանսը և բանվորների Միջապային ըն-
		կերությունը։ Ե., 1941:

նակ կատարվում են լրացուցիչ նկարագրություններ երկրորդ և երրորդ հեղինակների (կամ կազմողների վրա): Տեղեկատուների նկարագրության դեպքում անհրաժեշտ է կատարել ևս մեկ նկարագրություն երկրի վերնագրի վրա:

Օրինակ № 22

Անվանական լրացուցիչ նկարագրություն երկրորդ հեղինակի (համահեղինակի) վրա (տես օրինակ № 20)

		Բալաշով, Ը.
		Ալպարես, Ս. և Բալաշով, Ը.
		Ռազմա-քիմիական գործ: 3-րդ
		շաբ. երաթ. 15., 1939:

Օրինակ № 23

Լրացուցիչ նկարագրություն զրբի վերնագրի վրա, որի հեղինակները շապկի վրա չեն նշված (տես օրինակ № 20)

		Ռազմա-քիմիական գործ: 3-րդ շաբ. եր-
		աթ. 15., 1939:
		Ալպարես, Ս. և Բալաշով, Ը.

Յրիցակ Ա՝ 24

Նրեմ հեղինակների աշխատության նկարագրությունը:
Հեղինակները տիպոսաբերքի վրա նշված են վերնագրից ներքև

Բերեցովսկի, Բ. Յա. և ուրիշ.
Տարրական մաթ. մատենադարան. Մեխանի-
կայի և ֆիզիկայի տեղեկատու. Կապ. Բ. Յա.
Բերեցովսկին. Ա. Յա. Մոկտամով, Ի. Ի. Դե-
ստովսկին: Խմբ. Ի. Գ. Բրոնշտեյն: ԼԲ-Լ.,
ՕՍՏ Ի, ՏԵՔ: գրակ. գլխ. Խմբ., 1937:
188 էջ. իրան. (Օգնության ստախան
հոյակապ էրին):

Յրիցակ Ա՝ 25

Երեւն հեղինակների աշխատության նկարագրությունը:
Հեղինակները տիտղոսաբերքի վրա հշված են վերնագրից վերև:

Աստու, Ի. Ֆ. և ուրիշ.
Գծագրողը զանգրկող Վեֆենաբեր-
քարական տեղերից մեկի համար: Լ.,
ՕԳՏԻ: Վեֆենաբեր. և անտառաբանական
ԳԼԻ-ի համար, 1937:
47 էջ, ինքստ., 11 ր. գծագր.
Վերն. առաջ հեղ.: Ի. Ֆ. Աստու, Ս. Ս.
Կուրիկով, Ի. Ի. Եվդոկիմով:

Այդ պատճառով № 24 օրինակում նշված աշխատության նկարագրության ժամանակ հարկավոր է կազմել երեք լրացուցիչ նկարագրություն՝ հեղինակների և վերնագրի վրա, իսկ № 25 օրինակում նշված երկի նկարագրության դեպքում բավական է միայն կազմել երկու լրացուցիչ նկարագրություն համահեղինակների վրա:

Լրացուցիչ նկարագրություններ կազմվում են՝

ա) համահեղինակների վրա—երկու կամ երեք հեղինակների (կամ կազմողների) աշխատության նկարագրության դեպքում:

